



35-36(537-538)

29.12.2018

Ֆրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիրքար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՏԱՐԵՄՈՒՏԸ՝ ԼԱՎԱՏԵՄՈՒԹՅԱՄԲ ՈՒ ՇԱԿԱՏՈՎ



յին հաճախակի լարվածությունների համապատկերում ակնբեր է դառնում Արցախի փառապանծ Պաշտպանության բանակի օրեցօր աճող զորական ուժը: Վստահ ենք, հայ մարտիկի բազմի ուժը շարունակելու է շեշտված մնալ արցախյան հիմնախնդրի լուծման ընկալումներում: Ասել է թե՛ եթե ուժեղ է մեր բանակը, նշանակում է՝ ամուր է մեր պետականությունը: Իսկ ամուր է՝ շնորհիվ մեր ժողովրդի միասնական ու անկտորում կամքի:

Բանակ և դպրոց. այս կապն անհնար է որևէ կերպ քանդել թեկուզ այն պարզ հիմքով, որ վաղվա հայրենիքի պաշտպանը ծնավորվում է դպրոցում: Մենք դրա բազում օրինակներն ունենք: Այդպես եղել է երեկ, կա այսօր և կլինի վաղը:

Մեր մանկավարժները... Խելացի, սկզբունքային, դժվարություններից չդժգոհող և իրենց մասնագիտական գործին ամենաջողով նվիրված: Նրանք, իրոք, մեր երկրի աղմ են, ու պետք է առանձնակի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ: Եվ հնարավորինս դա արվում է: Պետության կողմից նոր դպրոցների կառուցման, հների վերանորոգման և, առհասարակ, ուսումնական բազայի ամրապնդման ուղղությամբ ամեն տարի, այդ թվում՝ 2018-ին, հանրապետությունում մեծածավալ աշխատանքներ են կատարվում: «Լուսարար»-ը պարբերաբար անդրադարձել է դրանց ու 2019-ին նույն ոգևորությամբ կշարունակի լուսաբանել իրականացվող ուշագրավ նախաձեռնությունները:

Մեզ մնում է լավատեսությամբ համակվել, անվերապահ հավատալ, որ գալիք տարում դարձյալ խաղաղությունն է թևածելու հայոց երկնակամարի տակ, և մեր բոլորի օջախներում ծփալու է խինդն ու ուրախությունը: Եղիցի՛:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Անցնող տարին հազեցած էր մի շարք կարևոր իրադարձություններով: Ամենից առաջ Արցախյան շարժման 30-ամյակի նշումն էր ամենատարբեր մակարդակներով ու ձևաչափերով: Անշուշտ, ամեն մի արցախցու համար 1988-ին սկիզբ առած ազգային-ազատագրական պայքարը մնում է իբրև ուղենիշ և ունի անփոփոխ խորհուրդ, որը հաջողությամբ փոխանցվում է սերնդեսերունդ:

Շարժման երեսնամյա հորեկանը հավուր պատշաճի նշվել է նաև հանրակրթական ու բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչը միաժամանակ հայրենագիտության և հայրենասիրության յուրօրինակ դաս է սովորողների համար:

2018-ը հարաբերական խաղաղության տարի էր, և անգամ սահմանա-

ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ



Ավանդույթի համաձայն՝ տարեմուտին ԱԶ կրթության, գիտության և սպորտի նախարարությունում տեղի ունեցավ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնաճյուղում տարվա ընթացքում բարձր ցուցանիշներ արձանագրած մարզիկներին ու մարզիչներին պարգևատրելու արարողություն:

Նախարար Նարինե Աղաբալյանն ուրախությամբ փաստեց, որ սպորտի ոլորտում արձանագրվում են շարունակական հաջողություններ: 2018թ. 1800-ից ավելի մարզիկներ մասնակցել են 33, եվրոպայի, աշխարհի առաջնություններին, միջազգային մարզաշարերի ու արձանագրել 440-ից ավելի մրցանակային տեղեր: Նրա հանդգամբ՝ 2019-ին այդ հաջողությունները կբազմապատկվեն: Ընթացքը դա է ցույց տալիս. մարզական միջոցառումների իրականացման ու խրախուսման նպատակով ամեն տարի ավելացվում են պետական բյուջեից հատկացումները: Գումարվում են հովանավորների կողմից ուղղվող միջոցները: 2019թ. հնարավորություն կլինի ավելի շատ մարզական միջոցառումներ կազմակերպել, և ավելի շատ մարզիկներ կմասնակցեն տարբեր մրցաշարերի ու առաջնությունների: Բնականաբար՝ արդյունքներն էլ կկրկնապատկվեն: Ընթացքի մեջ են մի շարք մարզահրապարակների ու մարզադաշտերի հիմնանորոգման աշխատանքները: Նախարարը տեղեկացրեց, որ եկող տարի մեր հանրապետությունում սպասվում է սպորտային մեծ միջոցառում. CONIFA-ի հովանու ներքո անցկացվելիք եվրոպայի ֆուտբոլի առաջնությունը, և այն ենթակառուցվածքները, որ ստեղծվելու կան հիմնանորոգվելու են այդ ընթացքում, այդ առաջնությունից հետո ծառայելու են սպորտի զարգացմանը մեր հանրապետությունում: Եվ ուրախալի է, որ դա լինելու է ոչ միայն Ստեփանակերտում, այլև շրջակայքումներում:

Շնորհավորելով պարգևատրվածներին՝ Ն. Աղաբալյանը, ի դեմս նրանց, շնորհավորեց բոլորին՝ Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ մաղթելով զինվորներին անփորձանք ծառայություն, մեր երկրին՝ խաղաղություն և կայունություն, բոլորին՝ նորանոր հաջողություններ և հաղթանակներ:

ԹՈՂ 2019-Ը ՄԻԱՅՆ ՇԱՂԱՆԱԿՆԵՐԻ ՏԱՐԻ ԼԻՆԻ ՄԱՐԶԱՆԵՄԱՐԶԻ ՄԵՐ ԱՍՏՂԵՐԸ



Լուսանկարում՝ Արթուր ԱՌՈՒՇԱՆՅԱՆԸ՝ աշխարհի կրկնակի, Եվրոպայի քառակի չեմպիոն:



Լուսանկարում՝ Միխայիլ ՄԻՆԻՍՅԱՆԸ՝ Եվրոպայի չեմպիոն:



Լուսանկարում՝ աջից ձախ՝ պատանիների և երիտասարդների սանդա-ուշուի Եվրոպայի մրցաշարի ոսկե մեդալակիր Արսեն ԲԱՂՐՅԱՆԸ, մարզիչ Դավիթ Գրիգորյանը, բրոնզե մեդալակիր Վարդան ԱՐԲՂՅԱՆՅԱՆԸ:



Լուսանկարում՝ Սանվել ՊԵՏՐՈՍՅԱՆԸ՝ բռնցքամարտի պատանիների և երիտասարդների՝ Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր:



Լուսանկարում՝ առաջին պլանում՝ սամբոյի Եվրոպայի չեմպիոն Սերգեյ ՎԱՐՈՒՄԵՏՅԱՆԸ, արծաթե մեդալակիր Դավիթ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ, բրոնզե մեդալակիր Դավիթ ԳՐԻԳՐՅԱՆԸ մարզիչ Էռնեստ ՄԻՐԶՈՅԱՆԻ հետ:

Վարդան ՅԱԿՈԲՅԱՆ ԱՄՆՈՐԻՆ ԸՆԴԱՌԱՅ ԿԱՄ՝

ԶՐՈՒՅՅ ԶՄԵՌ ՊԱՊԻ ՇԵՏ

Ես նկարեցի եղևնի տան մեջ, արմատը՝ հողում, որ հանկարծ մերոնք չգնան անտառ՝ ծառեր կտրելու: Եվ զարդարեցի եղևնին թղթե խաղալիքներով, երկրագնդի նման կլորիկ՝ տարբեր գաղղերով, գրերով տարբեր, մեկի վրա ես դաջել եմ մի բառ, մյուս գնդերը բաժանել թաղի իմ ընկերներին, որ իրենց ուզած բառերն էլ իրենք գրեն ու բերեն, ամեն մեկն իր սրտի ուզածը: Եվ հաջորդ օրը պատրաստ էր արդեն մեր տոնածառը: Խաղաղությունը կախելուց հետո կարողացիք միայն գրությունները՝ շրջելով մեկ-մեկ, եւ ինչ պարզեցի՞ք. բոլորս, առանց իրար ասելու, նույն բառն ենք գրել՝ «խաղաղություն», միայն Աստուծո՞ր թուրքի հետ կռվում նահատակված հոր միակ նկարը պատճենել թղթին՝ հավատալով, որ Չմեռ պապի հետ հայրիկը կգա, կիրականանա իր երազանքը: Դեհ, ի՞նչ, մնում էր նամակ գրել, որ գիշերն իմ բարձի տակ մնար, ու քնած պահիս գար Չմեռ պապը, վերցնե՛ր, կարդար. «Շատ եմ աղաչում քեզ, Չմեռ պապի, այս անգամ դու ինձ նվեր չբերես, դու Աստուծոց տուն կգնաս մութով եւ շատ նվերներ թողնես բարձի տակ, երբ քնած լինի: Դեռաջող տարվա Ամանորին էր, ինձ համար երբ դու նվեր ես բերել, պատմեցի նրան, ինձ չհավատաց: Ասաց՝ ինքն էլ նամակ էր գրել, բայց ինչպե՞ս է, որ դու չես կարդացել...»: Ոնց քնով անցա՞ չիմացա, հաջորդ օրը վեր կացա, տեսա բարձիս տակ շատ նվերներ ու մի նամակ. «Ապրես, Աստի համար դու հոգ ես տանում, քո նվերներից դրել եմ նաեւ նրա բարձի տակ»: Տարիներ հետո, երբ ինքս արդեն իմ տղաների բարձի տակ թաքցնում Չմեռ պապիկի «բերած-նվիրած» նվերներն էի դնում իմ ձեռքով, նոր գլխի ընկա, որ նույն Աստի խաղալիքներն էլ՝ իմոնց հետ մեկտեղ, հայրս էր դնում՝ իմ նամակները գիշերվա կեսին կարդալուց հետո:

Տարիքս հիմա Չմեռ պապիկի տարիքին է ճիշտ, մի այր եմ արդեն ծերմակամորուս. «Արի, Չմեռ պապ, կարոտել եմ քեզ: Եվ պիտի ասեմ հիմա էլ դարձյալ՝ նվեր չեմ ուզում, ինձ բավական է հենց այն, Չմեռ պապ, որ կաս վերջապես, ի դեմս քեզ՝ Մեկը, որին կարող եմ թոռնիկներիս պես ես էլ ի սրտե զվարթ կանջել՝ «պա՛պ»:

Իսկ ինչ մնում է մեր մանուկների համար քո բերած խաղաղությանը, թող որ այն լինի միշտ ու մշտական...

Բայց ընդհանրապես ասեմ, Չմեռ պապ, քեզ հուշեմ որպես ինքս էլ մի պապ, ուրիշ եմ հիմա երեխաները, եւ Չյունանուշը, որքան էլ սիրուն, նրանք չեն խաբվում: Արի, Չմեռ պապ ու մի հարվածով քո կախարդական հին գավազանի երկրի երեսից սքրիթ չարագույժ աղետներն ամեն, պատերազմները, նեռն ու չարը, շառն ու շուրը, վերադարձրու հավատն աշխարհի, լույսն Աստծո սուրբ ճանապարհի:

ԸՆԹԱՅ

ԱՐՑԱՆԻ ԲՈՒՇԵՐԸ՝ ՀԱՎԱՏԱՐԱՊՐԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Դեկտեմբերի 24-25-ը Արցախում էր ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) պատվիրակությունը՝ տնօրեն Ռուբեն Թովչյանի գլխավորությամբ: Արցախի պետական համալսարանում «Որակի ապահովման համակարգ, ինստիտուցիոնալ հավատարմագրում» թեմայով տեղի ունեցավ աշխատաժողով, որին ներկա էին Արցախում գործող համալսարանների ղեկավարները, բուհերի ինքնավերլուծություն իրականացնող խմբերի ներկայացուցիչները:

Աշխատաժողովի մասնակիցներին ողջունեց և արդյունավետ աշխատանք մաղթեց ԱրՊՀ ղեկավար Արմեն Սարգսյանը: Նա նշեց, որ հավատարմագրման գործընթացը մեծ ծավալի աշխատանք է պահանջում բուհի ներսում, և շնորհակալություն հայտնեց ՀՀ ՈԱԱԿ-ի անձնակազմին՝

տարբերություն այլ երկրների, Հայաստանի առանձնահատկությունները հաշվի առնելով, սկսել են ինստիտուցիոնալ հավատարմագրումից: Ընդ որում, Հայաստանում հավատարմագրման երկրորդ շրջափուլն է արդեն սկսվել, իսկ Արցախում այն առաջին անգամ պետք է իրականացվի:

Ռ. Թովչյանը ներկայացրեց ինստիտուցիոնալ հավատարմագրման մեխանիզմները, դրան ներկայացվող չափանիշներն ու չափորոշիչները:

Աշխատաժողովի առաջին մասում նա ներկայացրեց հավատարմագրման անհրաժեշտ հիմնական դրույթները: Այսօրվա մրցակցության պայմաններում յուրաքանչյուր բուհ ցանկանում է պահանջել իր տեղը, իսկ դրա համար նա պետք է իր առջև դնի հստակ նպատակներ և իրատեսական ռազմավարություն մշակի դրանց հասնելու համար՝ ելնելով երկրի պահանջներից ու սեփական ռեսուրսներից:

Ռ. Թովչյանը պարզաբանեց, որ որակի ապահովումը հենց այն մեխանիզմն է, որը հնարավորություն է տալիս քայլ առ քայլ բարեփոխել կրթական համակարգը: Բուհի խնդիրը ոչ միայն մասնագիտական կրթություն տալն է, այլև քննադատական-վերլուծական, նորարարական, ստեղծագործելու, մարդկանց կառավարելու, միմյանց հետ համաձայնեցված գործելու, դատողություններ անելու և որոշում կայացնելու, սպասարկելու միտված, բանակցելու, ձկուն մտածողությամբ կարողությունների ձևավորումն է:

«Այս կարողությունները պետք է ներառել ուսուցման ձևերի մեջ, և դա կլինի որակի բարելավման ձևերից մեկը»:



ցուցաբերած մասնագիտական աջակցության համար: Նախկինում Արցախի և ՀՀ պետական բուհերը հավատարմագրում չուներին, քանի որ ընդունված էր, որ եթե հիմնադիրը կառավարությունն է, դրա անհրաժեշտությունը չկա: Իսկ այսօր եթե բուհը հավատարմագրված չէ, կորցնում է իր գործունեության լիցենզիան:

Ռ. Թովչյանը տեղեկացրեց, որ աշխարհում հավատարմագրումը երկու գործընթացից է բաղկացած՝ ինստիտուցիոնալ և ծրագրային: Ի

նախապես նախատեսված էր կազմակերպում աշխատաժողով Արցախում: Առաջինն այս տարվա հունիսին էր, որի ժամանակ Ռ. Թովչյանի ղեկավարած պատվիրակությունը պարզաբանեց բուհերի հավատարմագրման տեսլականը, նշանակությունը, անհրաժեշտ քայլերը, անցկացրեց սեմինար բուհերի վերլուծություն իրականացնող խմբերի հետ:

ՀՀ ՈԱԱԿ-ը երկրորդ անգամ էր կազմակերպում աշխատաժողով Արցախում: Առաջինն այս տարվա հունիսին էր, որի ժամանակ Ռ. Թովչյանի ղեկավարած պատվիրակությունը պարզաբանեց բուհերի հավատարմագրման տեսլականը, նշանակությունը, անհրաժեշտ քայլերը, անցկացրեց սեմինար բուհերի վերլուծություն իրականացնող խմբերի հետ:

ՇՈՒՇԻՆ ԿՐԱՌՆԱ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ կրթության և գիտության ու ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունների հովանու ներքո դեկտեմբերի 17-ին Շուշիի «Եզգնիկ Մոզայան» ուսումնարանում ստորագրվեց համագործակցության հուշագիր: Մինչ այդ մասնակիցները՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնակատար Արայիկ Հարությունյանը, ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, կողմնից ամերիկաբնակ գործարար Սևան Թորոսյանը «Եզգնիկ Մոզայան» հաստատության տնօրեն Վասպուրակ Կարապետյանի ուղեկցությամբ շրջեցին ուսումնարանով, ծանոթացան մասնագիտական արտադրամասերին ու լաբորատորիաներին, հանրակրթական մասին, գրուցեցին աշակերտների հետ: Այնուհետև անցան հուշագրի ստորագրման արարողությանը:

արձագանքել նախաձեռնությանը և հանձն առել ապահովել 10 կրթաթոշակ: Ըստ նախարարի՝ չի բացառվում, որ մինչև սեպտեմբեր ավելի շատ մարդիկ ներգրավվեն այդ գործում:

ԱՀ ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանը, երախտագիտություն հայտնելով հայաստանյան գործընկերոջը նախաձեռնությանը գործուն աջակցություն ցույց տալու համար, ասաց, որ սրանով կարծրատիպ են կոտրում. մինչ այսօր ՀՀ կառավարության կողմից էր ամեն տարի հայաստանյան պետական բուհերում պետպատվերի շրջանակում տեղեր հատկացվում արցախցի ուսանողներին, իսկ այս քայլով հակառակ գործընթացն են սկսում՝ ՀՀ-ից կգան Արցախում սովորելու: «Երբ Կիպրոսում փակվում էր Մելքոնյան վարժարանը, ես մեծ ափսոսանք էի ապ-

րում, բայց միևնույն ժամանակ մտածում էի, որ Շուշին կարող է դառնալ համահայկական կրթա-

յա սերունդն է, որ պիտի իրագործի միացյալ Հայաստանի գաղափարը: Սրանով մենք ևս մեկ քայլ ենք անում այդ ուղղությամբ»:

«Եզգնիկ Մոզայան» ուսումնարանի տնօրեն Վ. Կարապետյանը հուշագիրը շատ կարևոր իրադարձություն անվանեց հաստատության կյանքում՝ համարելով դա մայր Հայաստանի հետ ուսումնարանի սովորողների փոխանակման ծրագրի սկիզբ, ինչպես նաև հնարավորություն՝ տարեցտարի ավելի մեծ թվով երիտասարդների ընդգրկելու մասնագիտական կրթության ոլորտում:

Իսկ Ս. Թորոսյանն ասաց, որ գաղափարն իրեն ոգևորել է, քանի որ ինքն էլ ԱՄՆ-ում աշխատում է շինարարության ոլորտում և քաջ գիտակցում է, թե ինչքան կարևոր է բարձր մասնագիտացված արհեստավորը շինարարության ոլորտում: Տեսնելով «Եզգնիկ Մոզայան»-ի հնարավորությունները՝ համոզվել է, որ այն բավարարում է այդ ոլորտի միջազգային չափանիշները: Վստահ է, որ այս նախաձեռնությանը կմիանան և ուրիշները: Մեր այն հարցին, թե հնարավոր է, որ արտասահմանից էլ ուսանողներ բերեն այստեղ սովորելու, Ս. Թորոսյանը պատասխանեց, որ չի բացառվում, իսկ ԱՀ ԿԳՍ նախարարն ավելացրեց, որ նպատակ ունեն Շուշիի ռեալական ուսումնարանը վերանորոգել և դարձնել համահայկական կրթական կենտրոն:



կան կենտրոնի այլընտրանք», - ասաց Ն. Աղաբալյանը՝ հավելելով, որ պարտադիր չէ, որ դա կենտրոնացված լինի մեկ կառույցի, մեկ հաստատության մեջ: «Այսօր Շուշին հավակնում է դառնալ նաև ուսանողական քաղաք, և կարծում են՝ մենք նաև մյուս հաստատություններում կարող ենք այս ուղղությամբ աշխատել, ու այժմ մեր քայլերը պետք է ուղղված լինեն նրան, քանի որ մենք նույն դաշտում ենք գործում և պիտի աշխատենք փոխլրացման սկզբունքով ու ինտեգրումը շատ ավելի ճիշտ ձևով կատարենք, որովհետև ի վերջո

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՄԱՆՈՐԸ ՇՈՒՇԻԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ



Ամանորը մուտք է գործում երկիր մոլորակի բոլոր անկյունները: Շուշիի ամենամեծ կրթօջախում այն սկսվում է շուրջաքարով, տոնակա համախմբվածությամբ, բարձր տրամադրությամբ: Չարդարուն տոնածառն իր յուրահատուկ հանդերձանքի միջով խրախուսում է միջոցառման մասնակիցներին: Փոքրիկ մի աղջնակ իրագործված է տեսնում երազանքը՝ ձեռքն առնելով տոնա-

ծառի տակ իր համար պահված նվերը: Այո, Ամանորը շքեղ տոն է, և երեխաները մեծ տոնախնդրությամբ դեկտեմբերի 22-ին Նոր տարվա երազանքն են հյուսում Շուշիի Խ. Աբովյանի անվան կրթօջախի աշխույժ դահլիճում, որտեղ փոքրիկ սանիկները սիրով ու քնքշանքով ողջունում են Չմեռ պապին: Այնուհետև հնչում են շնորհավորանքներ՝ ուղղված դպրոցի ուսուցիչներին: Իսկ Չմեռ պապն ու Չյունամուշը հանդիսավորապես բազմել են և ունկնդրում են ամանորյա հեքիաթի գեղեցիկությունները:

- Շնորհավոր Նոր տարի: Նոր տարին համախմբվածությամբ արած-թողածի ամփոփումների տոն է: Բարեմաղթանքները լավագույն ակնկալիքների համար են, տարվա ամենավաղ տոնի համար... Ստաղերի փայլվումով գարդարված տարվա զլխավոր ծառը գալիս ու լույս-բարին է բերում, որ ամեն երազանք կատարվի: Այդ լույսով են վառվում բոլոր հոգիները, ու իրավունք է ողջ դահլիճը: Սա ժպիտների, սիրո, երջանկության տոն է, ու հնչում է մեծ երազանքը:

- Թե աշխարհում փակ դռներ կան, թող որ բացվեն այս գիշեր... Ու ողջագուրվեն բոլոր հոյսերը... Թող հայոց աշխարհում լինի խաղաղություն, և հարգանքն ու սերն անպակաս լինեն ամենքից:

- Հանձնված ենք, որ 2019 թվականը Շուշիի և շուշեցիների համար լինելու է մեծ ձեռքբերումների տարի, - հնչում է բեմից: Միջոցառման ավարտը դարձյալ շուրջաքարն է՝ մեր համախմբվածության լավագույն ուրախ խորհրդանիշը: Երեխաները՝ կենսուրախ ու երջանիկ, ուսուցիչները՝ համախմբված խորհրդանշան են ու ավելի միասնակցում՝ խտացնելով մեր մեծ երազանքի տեսլական՝ Հայոց աշխարհի համախմբվածությունն ու հզորացումը:

Հայոց ավանդույթները մեր բարեմաղթանքների գրավական են, և հավատում ենք լավին, բարուն, որ կջնջի թախիծը Հայոց աշխարհից. ահա երգերի թեմատիկան, որ թիկ-թակ սլաքների պես բարախում է փոքրիկների սրտերում: Պետք է միայն հավատալ Ամանորի հրաշքին... Բովանդակալից միջոցառումը կազմակերպել էին դպրոցի երգի-պարի շնորհալի ուսուցչուհի Լուսինե Չաբարյանը, կազմակերպիչներ Գայանե Սարգսյանը և Ինեսա Պետրոսյանը:

Բեմ է հրավիրվում դպրոցի տնօրեն Լիանա Հարությունյանը, որը շնորհավորանքի խոսք է հղում ուսուցիչներին ու աշակերտներին, ապա գովասանագրեր հանձնում 2017-2018 ուստարվա գերազանց և օրինակելի աշակերտներին:

Միջոցառման ավարտին դպրոցի աշակերտները Չմեռ պապից ստացան նվերներ:

Կարոլիթեր ՀԱԿՈՒՅԱՆ

ԱՄՓՈՓՈՒՄ ԱՎԱՐՏՎԵՅ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԸ

Հանրակրթական դպրոցներում փակվել է ուստարվա առաջին կիսամյակը: Այդ առթիվ դեկտեմբերի 14-ին Բերձորում շրջվարչակազմի նիստերի դահլիճում շրջանի հանրակրթական դպրոցների տնօրենների մասնակցությամբ կայացավ խորհրդակցություն, որը վարեց շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի (ԿՍԲ) վարիչ Վարդուշ Մովսեսյանը: Ներկա էին շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Դավիթյան Սահակյանը և «Քաջաթաղի շրջանի պետական հանրակրթական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Վիտալի Շալունցը, ԿՍԲ աշխատողներ: Օրակարգում հանրակրթությանը վերաբերող մի շարք հարցեր էին: Ուստարվա առաջին կիսամյակը փակելու հետ կապված՝ Վ. Մովսեսյանը անդրադարձավ 12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն» առարկաների անցկացվող ավարտական քննություններին: Նշվեց, որ երկրորդ կիսամյակում այդ առարկաների քննություն հանձնած աշակերտները պետք է ապահովվեն առնվազն 31 դասաժամով: Անդրադարձ եղավ առարկայական արտադասարանական խմբակներին: Նա հորդորեց տնօրեններին, որ քննությունների գնահատականները նշանակվեն ըստ աշակերտի գիտելիքների: Կարևորվեցին ներառարկական դասընթացների կազմակերպումը և այն, որ տնային պայմաններում կրթություն ստացող երեխաների հետ աշխատանքներն իրականանան ըստ նախատեսած պլանի: Խոսե-

լով դպրոցական առարկայական օլիմպիադաների անցկացման մասին՝ Վ. Մովսեսյանը տեղեկացրեց, որ հունվարի կեսերին կանցկացվի դպրոցական փուլը, որի արդյունքում դպրոցները կորոշեն շրջանային փուլի մասնակիցներին:



Հորդորեց այս ընթացքում նույնպես ճիշտ գնահատել աշակերտների գիտելիքները: Նշեց նաև, որ մեր աշակերտները մշտապես ակտիվ են եղել շրջանային և հանրապետական փուլերում, արժանացել պարգևների: Խոսվեց աշակերտների անձնական գործերը վերջնական տեսքի բերելու մասին: Հաստատվեց կարևորվեցին 9-րդ և 12-րդ դասարանցիների անձնական գործերը, որպեսզի հետագայում խնդիրներ չառաջանան հիմնական կրթության վկայականներն ու միջնակարգ կրթության ատեստատներն ստանալու գործում: Երջանի որոշ դպրոցներում ջեռուցումն իրականանում է կենտրոնացված կարգով. աշխատում

են կաթսայատները: Վ. Մովսեսյանը տնօրեններին հանձնարարեց մշտապես հսկել դրանց գործունեությունը վթարներից, արտակարգ դեպքերից խուսափելու նպատակով: Շնորհավորելով գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ Վ. Մովսեսյանը տեղեկացրեց, որ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը շրջանի 1-4-րդ դասարանցիների համար հատկացրել է ամանորյա նվերներով տոպրակներ, 5-րդ և 6-րդ դասարանցիները՝ մոտ 380 հոգի, դեկտեմբերի 23-ին կգնան Ստեփանակերտ՝ մասնակցելու ամանորյա միջոցառումներին: Խոսելով դպրոցներում այս օրերին տոնական միջոցառումների անցկացման մասին՝ հանձնարարեց, որ տնօրենները լինեն ուշադիր հատկապես խաղալիք-պայթուցիչների մասով: Եղան նաև կազմակերպչական հարցեր: Տնօրենները հարցրեցին առաջարկներով դիմեցին վերադասներին:

Կարևորվեց գյուղական դպրոցների պահակներին հարցը. մեկ դրույթով աշխատող նախատեսածից ավելի է մնում աշխատատեղում: Երջանի որոշ կրթօջախներ աշխատում են 5-օրյա ռեժիմով: Այս հարցի վերաբերյալ կայացավ քննարկում: Կրթության ոլորտի ղեկավարության կողմից նշվեց, որ ցանկացած դպրոց ինքը պիտի որոշի 5, թե՛ 6-օրյա ռեժիմով աշխատել: Պետք է տեղի ունենան մանկտրիի նիստեր, որոնց մասնակից լինեն նաև ծնողները: Այնուհետև մանկտրիի կողմից դիմում ներկայացվի ԿԿՍ նախարարություն:

«Քաջաթաղի շրջանի պետական հանրակրթական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Վ. Շալունցը անդրադարձավ դպրոցներում շահագործման ոչ ենթակա գույքի դուրսգրման խնդրին: Իրագրեց, թե ինչպես վարվել այս հարցում:

Խորհրդակցության վերջում ԿՍ բաժնի առաջատար մասնագետ Սիրվարդ Թամազյանը իրագրեց «Մեղու» և «Կենդանու» խաղմրցույթների արդյունքների մասին: Մասնակից դպրոցների տնօրեններին հանձնեց հավաստագրերը: Տեղեկացրեց, որ Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանից երկու աշակերտ «Մեղու» մրցույթում ճանաչվել են հաղթող: Նրանց հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նունա Գալստյանը «Այբ» կրթական հիմնադրամի կողմից պարգևատրվել է շնորհակալագրով, որը հանձնեց կրթօջախի տնօրեն Անահիտ Քոսակյանին: «Այբ»-ը երախտագիտություն է հայտնել նաև Ս. Թամազյանին՝ «Մեղու-2017» հայերենի մրցույթը բարձր կազմակերպելու և անցկացնելու համար:

Շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Դավիթ Սահակյանը, ամփոփելով խորհրդակցությունը, ասաց, որ այս օրերին շրջվարչակազմի ղեկավար Ստ. Սարգսյանի հետ եղել են շրջանի տարբեր համայնքներում, այցելել դպրոցներ: Նա նշեց նկատված որոշ թերությունների մասին: Շնորհակալություն հայտնեց կրթության ոլորտի աշխատողներին ու աշակերտներին, որ ակտիվորեն մասնակցել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի դրամահավաքին:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՋԳԻ ԱՊԱԳԱՅԻ ՇԵՔ



Դեկտեմբերի 18-ին Ասկերանի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի նիստերի դահլիճում տեղի ունեցավ շրջանի հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների տնօրենների խորհրդակցություն: Այն վարում էր կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մայիլյանը: Օրակարգում մեկ տասնյակից ավելի հարցեր էին:

Դպրոցներում մտահոգիչ է մնում բնագիտական առարկաների դրվածքը, ինչին և ուղղված էր օրակարգի առաջին հարցը: Մաթեմատիկա, քիմիա, ֆիզիկա առարկաների ուսուցումը բարձր հիմքերի վրա դնելու և զարգացնելու համար կրթության բաժնի վարիչը տնօրեններին հորդորեց գտնել ամենատարբեր ուղիներ, աշակերտներին խրախուսելու ձևեր՝ այդ առարկաների դասավանդումն արդյունավետ կազմակերպելու համար: Խոսելով կազմակերպվող ամենամյա առարկայական օլիմպիադաների մասին՝ նշվեց, որ դրանցում մեծ ակտիվություն և որակ ապահովելու համար այսուհետ առաջնակարգ տեղեր զբաղեցրած աշակերտների ուսուցիչները (խոսքը բնագիտական առարկաների մասին է) կարժամանակ մեծ խրախուսանքի՝ մեկ շաբաթյա ուղևորություն Սիյուռքի ողի դպրոց փորձի փոխանակման, ինչու չէ, նաև հանգիստը վայելելու համար:

Ասել է թե՛ որևէ առարկայի ուսուցումը դպրոցներում բարձր հիմքերի վրա դնելու հարցում հաջողության հասնելու համար պետք է աշակերտին ոչ միայն կոնկրետ առարկան սովորեցնել, այլև դրա միջոցով կայուն արժեք համակարգ ձևավորել, ուսուցման բովանդակությունը դարձնել ապագա քաղաքացու կերտման հիմքը:

Նորագույն տեխնոլոգիաների դարաշրջանում, թերևս, ղեկավար է հնագույն մեթոդներով աշակերտների մոտ այս կամ այն առարկայի հանդեպ սեր և հետաքրքրություն առաջացնել: Ուստի առաջարկվեց մեկ անգամ և ուսումնասիրել դասագրքերը, դրանց բեռնաթափման ուղղությամբ հանդես գալ առաջարկություններով: Ինչպես տեղեկացրեց Կ. Մայիլյանը, այս հարցի շուրջ ԿԿՍ նախարարությունում նույնպես ակտիվ քննարկումներ են ընթանում:

Խորհրդակցության ժամանակ խոսվեց դպրոցների հաստիքային աշխատողների աշխատանքային կարգապահության պահպանման, պարտականությունները խղճի մտքը կատարելու մասին: Մանկապարտեզների գործունեության և ուսումնա-

դաստիարակչական աշխատանքների կազմակերպման մասին Կ. Մայիլյանը ասաց, որ լավ կլիներ մանկապարտեզներում մեծ տեղ հատկացնել խաղերին, դրանց միջոցով երեխաների մոտ սեր և հետաքրքրություն առաջացնել շրջակա միջավայրի հանդեպ:

Ներկա պայմաններում ողջունելի է, որ որոշ դպրոցներ ունեն իրենց սոցիալական ցանցերը, որոնցում պարբերաբար տեղադրվում են դպրոցում տեղի ունեցած միջոցառումները: Կրթության բաժնի վարիչը տնօրեններին հորդորեց ստեղծել նմանատիպ կայքէջեր և սոցիալական ցանցն օգտագործել որպես այլ դպրոցների հետ համագործակցելու նոր հարթակ:

Կ. Մայիլյանը ներկայացրեց դպրոցներում Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից արտաքին ստուգման արդյունքները: Որոշ դպրոցներում պատկերը նախանշելի չէ:

Խորհրդակցության ժամանակ խոսվեց դպրոցներում 5-օրյա աշխատանքային ռեժիմի անցնելու, արտաժամյա պարապմունքների, սահմանապահ զինվորների համար ամանորյա նվերներ պատրաստելու, դպրոցներում պատշաճ մակարդակով ամանորյա հանդեսներ կազմակերպելու և անցկացնելու ու նաև դպրոցականներին ամանորյա նվեր տրամադրելու մասին: Կ. Մայիլյանը տնօրեններին կոչ արեց ամենօրյա գործունեության մեջ այսուհետ և առաջնորդվել փոխադարձ հանդուրժողականության և հարգանքի մթնոլորտում՝ ի շահ ընդհանուրի:

- Չպետք է մոռանալ, որ գործ ունեք դեռևս չձևավորված անհատականությունների հետ: Թե ինչպիսին կլինի մեր ազգի ապագան, մեծապես կախված է մեզանից: Ուստի երբեք սպառնալիքի կամ անձնական վիրավորանքի ճանապարհով չպիտի դպրոցում հարց լուծվի: Ձեր ղեկավարած կոլեկտիվներում պետք է տիրի բարոյա հոգեբանական կայուն վիճակ, կոլեկտիվ մտածողություն, որոնց առկայության դեպքում կարելի է ցանկացած խոչընդոտ և արգելք հաղթահարել, բարձունքներ նվաճել,- ասաց Կ. Մայիլյանը:

Նա դպրոցների տնօրեններին ներկայացրեց բաժնի նոր գլխավոր մասնագետ Գայանե Շամիրյանին՝ փաստելով, որ վերջինս բավականին բարձր ցուցանիշներով է անցել մրցույթը: Նա հույս հայտնեց, որ նորանշանակ մասնագետը բաժնի աշխատանքներին նոր շունչ ու թարմություն կհաղորդի՝ աշխատանքային գործունեության մեջ օգտագործելով մաթեմատիկական և նորագույն տեխնոլոգիաների տիրապետելու ունակությունները:

Բաժնի սպորտի գծով գլխավոր մասնագետ Գրիգորի Մարտիրոսյանը մատուցեց մարզական միջոցառումներին մասնակցելու պատիվությունը, որոշ դպրոցներում ՆՁՊ և ֆիզկուլտուրա առարկաների հանդեպ մակերեսային վերաբերմունքը: Նաև հայտարարություններ արեց առաջիկայում կազմակերպվելիք մարզական միջոցառումների վերաբերյալ:

Խորհրդակցության վերջում Կ. Մայիլյանը պատասխանեց ներկաներին հուզող հարցերին, հանդես եկավ հայտարարություններով:

Անահիտ ՊԵՏՐՈՅԱՆ

ԱՐՅԱՆԻ ՊԱՏԱՆԻ ՔԻՄԻԿՈՍՆԵՐԸ ՀԱՄԱՆԱՅԿԱԿԱՆ 9-ՐԴ ՄՐՅԱՆԱՐՈՒՄ

Դեկտեմբերի 8-ին Երևանում անց է կացվել Պատանի քիմիկոսներ 9-րդ համահայկական մրցույթի քառորդ եզրափակիչ փուլը, որին Արցախից մասնակցել է Մարտունու հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցի «Մոնթեպերդո» թիմը՝ տնօրեն Կ. Պողոսյանի և քիմիայի ուսուցչուհի Կ. Կարապետյանի ղեկավարությամբ:

Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարն ինտերակտիվ խաղի սկզբունքով անցկացվող թիմային մրցույթ է, որտեղ 9-12-րդ դասարանների աշակերտները լուծում են քիմիայի բարդ ու հետաքրքիր առաջադրանքներ, բանավիճակում գիտական թեմաների շուրջ, ամուսն իրենց առաջին գիտական հայտնագործությունները:

Մրցույթի նպատակն է աշակերտներին ներգրավել գիտական գործունեության մեջ, նպաստել նրանց ստեղծագործական կարողությունների ու գիտական բնասիրտների վարելու հմտությունների զարգացմանը, խթանել քիմիայի արտադասարանական աշխատանքները՝ հետաքրքրություն ձևավորելով քիմիա առարկայի նկատմամբ:



«Մոնթեպերդո» թիմի պատանի քիմիկոսները, քառորդ եզրափակիչ փուլում կատարելով բարդ ու հետաքրքիր առաջադրանքներ, անցել են կիսաեզրափակիչ փուլ, որը կանցկացվի 2019թ. ապրիլին: «Կիսաեզրափակիչ փուլում քննարկվում են նախօրոք հրապարակված առաջադրանքներ: Դրանք բաց տեսակի առաջադրանքներ են, այսինքն՝ չունեն միանշանակ և վերջնական լուծում, ինչը հնարավորություն է տալիս նույն հարցի շուրջ ունենալ լուծման բազմաթիվ մոտեցումներ: Առաջադրանքների պայմանները ձևակերպվում են հակիրճ ու հստակ և չեն պարունակում լուծման համար անհրաժեշտ բոլոր տվյալները, ինչն իր հերթին թույլ է տալիս ինքնուրույն կատարել որոշ ենթադրություններ և ընտրել պատասխանի հնարավոր իրատեսական տարբերակ: Առաջադրանքները կատարվում են խմբով: Դրանց լուծման համար անհրաժեշտ է իրականացնել տեսական և փորձնական հետազոտություններ»,- ասում է քիմիայի ուսուցչուհին: Նա հավելեց նաև, որ դպրոցն արդեն երկրորդ անգամ է մասնակցում համահայկական մրցաշարին: «2016-2017 ուստարում ևս մասնակցել ենք մրցաշարին, կիսաեզրափակիչ փուլում ընդգրկվել լավագույն տասնյակի մեջ: Նույն ուսումնական տարում կազմակերպվել են փնջային դաս, որի ժամանակ աշակերտները շրջանի ուսուցիչներին են ներկայացրել իրենց առաջին գիտական հետազոտություններն ու փորձի կայունագործությունները»,- հավելեց Կ. Կարապետյանը:

Դպրոցի պատվով բարձր պահելու, հերթական անգամ հաջողություն գրանցելու համար դեկտեմբերի 12-ին ուսուցիչների և աշակերտների ներկայությամբ պատանի քիմիկոսներին հանդիսավոր հանձնվեցին «Այբ» կրթական հիմնադրամի կողմից տրված հավաստագրերն ու դպրոցի պատվոգրերը:

Առաջիկա փուլերում հաջողություններ գրանցելու համար թիմի անդամներից պահանջվում է լարված ու ծավալուն աշխատանք: Հաջողություններ մաղթենք պատանի քիմիկոսներին՝ զարմանահարաշ այս գիտության թե՛ծ պայքարում հաղթելու համար:

Անուշ ԱՍՐԻԲԱԲԱՅԱՆ
Ք. Մարկոմնի

ՌԻՍԻՏՈՒՄ

ՓՆՋԱՅԻՆ ԴԱՍԱՆՈՒՄՆԵՐԸ՝ ԴԱՍԱՎԱՆԴԱՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Այս ուսումնականը ԱՅ Շահունյանի շրջանի դպրոցներում տարբերվում է տարբերակի զարգացող ուսումնական ծրագրերով, ԿՍ բաժնի կողմից անընդհատ ստացվող նորություններով, համակողմանի ստուգումներով, ուսուցիչների առավել բարձր մասնագիտական ինքնակրթությամբ:

Շրջանի դպրոցներում ավելի բարձր մակարդակի վրա է արտադասարանական աշխատանքների կազմակերպման դրվածքը, և հնարավորինս արվում է ամեն ինչ՝ բարձրացնելու ուսումնական ցուցանիշները: Շրջանային-փնջային դասախոսումները դրանց խոսուն վկան են:

Նոյեմբերի վերջին Քնարավանի դպրոցում փնջային դասախոսում անցկացվեց հետևյալ առարկաներից: Մայրենի՝ 1-ին դասարան, Մաթեմատիկա՝ 3-րդ դասարան, Բնագիտություն՝ 5-րդ դասարան, ՀԵՊ, Անգլերեն՝ 6-րդ դասարան և 9-րդում՝ Ռուսաց լեզու, Երկրաչափություն:

Քնարավանի դպրոցը գործում է 2006 թվականից՝ մի քանի աշակերտով: Այս տարի աշակերտների թվաճի ռեկորդային ցուցանիշ գրանցած դպրոցն ունի 66 սան, որոնք հիմնականում սովորում են տարրական դասարաններում, բայց ունեն մասնագետի լուրջ խնդիր: Դպրոցում դասավանդող ուսուցիչների մի մասը երիտասարդ են, ոչ մասնագետներ: Քնարավանի դպրոցը, գտնվելով Վարդենիս-Մարտակերտ նորակառույց ճանապարհի հարևանությամբ, ունի զարգանալու լայն հեռանկարներ:

Օրերս շրջանի ԿՍ բաժնի կողմից կազմակերպվեց շրջանային դասախոսում մաս Ակնա-

բերդի դպրոցում: Այն իր աշխարհագրական դիրքով շրջաններումից բավականին հեռու է, բայց շրջանի լավագույն դպրոցներից է: Գյուղը գեղեցիկ է ոչ միայն բնությամբ, այլև իր հրաշք փոքրիկներով, ինչը հույս է ներշնչում, որ սահմանային այս գյուղն ապագա ունի: Դպրոցի մանկավարժական համակազմը մի երազանք ունի, այն է՝ դպրոցը վերանորոգվի,



բանի որ այն գործում է ազատագրված գյուղի հին դպրոցի շենքում (վերջինս կառուցվել է 1974թ.), հիմնադրվել է գյուղի ազատագրումից անմիջապես հետո՝ 1993 թվականին: Դպրոցը կրում է նախկին Շահունյանի շրջանի դեկավար, ազատամարտիկ Շահեն Սեդրյանի անունը:

Կրթօջախում սովորում է 111 աշակերտ: Ի տարբերություն շատ գյուղերի, այստեղ համակազմը դասարաններ չկան: Բոլոր տասներկուսն էլ առկա են: Ուսուցիչների մեծ մասը

երիտասարդներ են՝ դպրոցի նախկին շրջանավարտներ: Դպրոցն ունի միայն «Քիմիա» առարկայի մասնագետի պահանջ: Այստեղ կազմակերպված դասախոսման արդյունքը գոհացուցիչ էր, քանի որ բոլոր ուսուցիչներն ունեն մասնագիտական լուրջ պատրաստություն, չնայած անմիջապես ու անշուք շենքային պայմաններին: Դպրոցը կահավորված է պատի թերթերով, ուսումնասօժողակ դիրքակազմի պարագաներով, Փառքի անկյունով: Ակնաբերդում դասախոսման անցկացվեցին Մայրենի՝ 3-րդ, 5-րդ դասարաններում, Մաթեմատիկա՝ 2-րդ, 6-րդ դասարաններում, Ռուսաց լեզու՝ 9-րդում, ՆԶՊ՝ 8-րդում, Հայոց լեզու, ՀԵՊ՝ 11-րդ դասարանում: Դասախոսումներին մասնակցում էին շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ Ռ. Բաբաջանյանը, ԿՍ բաժնի վարիչ Խ. Վարդանյանը, բաժնի առաջատար մասնագետ Ա. Նալբանդյանը: Երկու դպրոցներում էլ բաժնի կողմից բոլոր դասերը վերլուծվեցին նախ մասնագետների, ապա՝ վերադասի կողմից: Արդյունքում ծնվեցին հետաքրքիր գաղափարներ, մտահղացումներ, որը շրջանի դպրոցներում աշխատող ուսուցիչների համար համագործակցության նոր կամուրջ կառուցե: Պարոն Վարդանյանը, կարևորելով այս տեսակ շրջայցերը, խոստացավ, որ որանք կլինեն շարունակական: Նա որոշակի համեմատարակազմեր տվեց բոլոր դպրոցների ուսուցիչներին, իսկ տնօրեններին հորդորեց հետևողական լինել՝ ավելի բարձրացնելու շրջանի կրթական առաջընթացը: Ռ. Բաբաջանյանն իր ելույթում նշեց, որ այցերը տարբեր

դպրոցներ կլինեն կանոնավոր՝ հիմք ունենալով արդյունավետ ռազմավարությունը: Խորհուրդ տվեց առավել հաջողված դասերի մեթոդներն ու դիրքակազմի պարագաները փոխանցել միմյանց:

Դպրոցի տնօրեն Նորայր Գալստյանը, իր երախտագիտությունը հայտնելով մասնակիցներին, ներկայացրեց դպրոցի պատմությունը, հաջողություններն ու ձեռքբերումները:

Շրջանի ԿՍ բաժնի վարիչ Խ. Վարդանյանը հույս հայտնեց, որ հետևողական քաղաքականության, միասնական աշխատանքի և սրտացավ աշխատելու դեպքում շրջանում հնարավոր է բարձրացնել կրթական ցուցանիշները:

Դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն Լյուդա Քոխյանը նշեց դպրոցի անցած տարիների հաջողությունները, իսկ ամենակարևոր ցուցանիշն այստեղ աշխատող երիտասարդներն են, որոնք իրենց նախկին սաներն են և համալրել են իրենց շարքերն ու բարձր են պահում ուսուցչի վեհ կոչումը:

Խորին շնորհակալություն ենք ուզում հայտնել Քնարավան և Ակնաբերդ դպրոցների տնօրինություններին՝ հյուրընկալության համար, հատկապես տարրական դասարանների մեթոդավարման նախագահ Տանյա Դալլաքյանին, որն ամբողջ ընթացքում, չնայած պատկառելի տարիքին, շրջում էր հյուրերի հետ, ջերմ վերաբերմունք ցուցաբերում:

Սարիամ ՓԻԼԱՅՅԱՆ
Տեղեկության միջև. դպրոցի ուսուցչուհի

ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԴԱՌՆԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ

Լրագրությունն աշխարհի ամենակարևոր մասնագիտություններից է: Սա փաստել է մաս կողմնաբացի վիպագիր և լրագրող Գաբրիել Գարսիա Մարկեսը: Դե, իհարկե, եթե չլինեին լրագրողները, մարդիկ տեղեկացված չէին լինի: Լրագրողը նոր ասելիք պետք է ունենա, նոր ոճ և մտածողություն: Լրագրողի գործը ոչ թե ապրելու միջոց է, այլ ապրելու ձև:

Ձրուցակիցս ԱրՊՅ գրականության և լրագրության ամբիոնի վարիչ, Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միության անդամ, «Ժուռնալիստիկա» ուսումնամեթոդական ձեռնարկի և գրեթե երկու տասնյակի հասնող գիտական հոդվածների հեղինակ Շուշան ԱՍԿԻՐՅԱՆ է:

«Լրագրություն մասնագիտությունը պետք է լայն հնարավորություններ ստեղծի ԱրՊՅ-ում, որպեսզի գիտահետազոտական աշխատանքներն արդյունավետ իրականացվեն: Քանի որ մենք շատ լավ հասկանում ենք, որ կոչու քաղաքականությունների կողքին այսօր փափուկ քաղաքականություն է տարվում տարբեր գերտերությունների կողմից, և պետք է սպառազինվենք ոչ միայն զինամթերքով, այլև տեղեկատվական պատերազմների ոլորտում ունենանք պատրաստ մասնագետներ, փորձագետներ, որոնք կարողանան այդ հարթակում իրականացնել ճիշտ և նպատակային քաղաքականություն: Ժուռնալիստիկա բակալավորատի ծրագիրն այսօր իր գիտական ուսումնասիրություններն ու դասընթացները ծավալում է ՋԼՄ տեխնիկայի, մեդիաոլորտի ժամանակակից տեսությունների, մեդիա և քաղաքական տեխնոլոգիաների հիմնական ուղղություններով: Այն մասնագիտական գիտելիքներ է տալիս, մեծացնում լրագրագիտության ոլորտում գիտական աշխատանքներ իրականացնելու հնարավորությունները»,- ասաց նա: Շ. Ասկարյանը հավելեց, որ «Հաղորդակցություն», «Մեդիա հասարակություն» մագիստրոսական ծրագրերի նպատակը ուսանողներին բազմակողմանի գիտելիքներ տալն է:

Հարցին, թե ներկայիս լրագրության բաժնի ուսանողներին հանրային հեռուստատեսությունը բավականին հնարավորություններ է ընձեռում իրենց առաջին քայլերը կատարել մեդիաոլորտում, Շ. Ասկարյանը պատասխանեց, որ ինքը մեծ երախտագիտությամբ է դրան վերաբերվում, որովհետև Արցախի հանրային այն հարթակն է, որը ԱրՊՅ լրագրության բաժնի ուսանողներին դրա հնարավորությունը տալիս է: Նա նաև նշեց, որ ներկա դրությամբ լրագրության բաժնում սովորող ուսանողների 45-ից 10-ն այս պահին մասնագիտական գործունեություն է ծավալում, և դա կապված է այն բանի հետ, որ ինքը, որպես ամբիոնի վարիչ,

հանդիպումներ է ունեցել հանրապետությունում գործող լրատվամիջոցների ղեկավարների հետ, և ձեռք բերված պայմանավորվածության արդյունքում բաժնի ուսանողները շատ ակտիվ, սերտ համագործակցության մեջ են տվյալ լրատվամիջոցների հետ, նրանց լայն հնարավորություններ են տրված, որ իրենց մասնագիտության առաջին քայլերն անեն: «Այսօր Արցախի հանրային հեռուստատեսությունում գործում է երիտասարդական ծրագիր, որի ստեղծագործական կազմում ընդգրկված են մեր բաժնի ուսանողները: Հաշվի առնելով յուրաքանչյուր դիտումների քանակը՝ կարող են ասել, որ ծրագիրը պահանջված է շնորհիվ այն մասնագետների, որոնք այսօր ԱրՊՅ-ում են դասավանդում»,- շարունակեց Շ. Ասկարյանը: Համալսարանում գործում է ստուդիա, որն ուսանողներին հնարավորություն է տալիս իրականացնել գործնական աշխատանքներ: Ուսանողներն օգտվում են դրանից, ստուդիան իրո՞ք նպատակային է գործում:

Այս հարցին ամբիոնի վարիչը հետևյալ պատասխանը տվեց. «Այսօր մեր բաժինը կարիք ունի ոչ թե փոքր հեռուստատեսության, այլ՝ մասնագիտացված: Տեխնիկապես հագեցած լաբորատորիա պետք է լինի, առաջիկայում մենք նախատեսում ենք ներդրել սարքավորումներ, որ ուսանողները հնարավորություն ունենան իրենց տեսական գիտելիքները կիրառել գործնականում»: Նա նշեց, որ ամբիոնի կողմից տարվում է այնպիսի ռազմավարական պլանավորում, որ լրագրության բաժնի ուսանողներին պետք է դասախոսի կամ պրակտիկ, կամ լրագրության ոլորտում գիտահետազոտական աշխատանք իրականացրած մասնագետները: «Այսօր մեր բաժնի կողմից մասնագետներ են պատրաստվում ոչ միայն տպագիր լրատվամիջոցների, ռադիոյի և հեռուստատեսության, այլև գերատեսչական մարմիններին, մամուլի ծառայություններին համար, ինչը շատ կարևոր է: Մամուլ ծառայություններում տեղեկատվության հետ տարվող աշխատանքների գծով բաժնիներում կարիք ունենք մասնագետների, որոնք իրենց գործի գիտակն են»,- ասաց իմ գրուցակիցը:

Ինչպիսի՞ն կուզենար տեսնել լրագրության բաժինը տարիներ հետո՝ Շուշան Ասկարյանը պատասխանեց. «Կցանկանայի տեսնել որպես առանձին ամբիոն, որտեղ գիտական թեզ պաշտպանած և պահանջված մասնագետներ լինեն ու զբաղվեն Արցախի Հանրապետության տեղեկատվական ինֆորմացիոնականության հարցերով. այս դեպքում ամբիոնի աշխատանքը արդարացված կլինի»:

Արմինե ԲԱՂԱՍԱՐՅԱՆ

ՕՏԱՐ ԼԵՉՈՒՆԵՐԻ ՄԻԱՄՅԱԿ ԳՊՐՈՅՈՒՄ

Օտար լեզուների միամսյակի շրջանակում Ստեփանակերտի հ.6 հիմնական դպրոցում տեղի ունեցավ «Բացահայտենք Ֆրանսիան» խորագրով միջոցառում, որը կազմակերպել էր ֆրանսերենի ուսուցչուհի Վիլյետա Առուշանյանը:

Աշակերտները ներկայացրին Ֆրանսիայի պատմությունը, այդ երկրի պետական խորհրդանիշները, ապա լուսաբանեցին Ֆրանսիայի դիրքը քարտեզի վրա և դրոշի գույների խորհուրդը: Խոսեցին հայ-ֆրանսիական բարեկամական կապերի մասին, որի առաջնությունն է հայ ժողովրդի մեծ զավակ՝ ֆրանսիացի Շառլ Ազնավուրը: Տեղեկություններ հայտնեցին նաև Ֆրանկոֆոնիայի տոնի վերաբերյալ կատարվող միջոցառումների մասին:

Ուսուցչուհի Վ.Առուշանյանի ջանքերով աշակերտները ֆրանսերեն գեղեցիկ արտասանությամբ խոսեցին հայ և ֆրանսիացի ժողովուրդների բարեկամության մասին, բեմադրեցին երկխոսություններից կազմված խմբուկներ՝ համեմատ Օնորե դը Բալզակի և Պյոլը դը Պուլու: Ներկայացվեցին ֆրանսիական կինոարվեստի, նորածնության և խոհանոցային արվեստի առանձնահատկությունները, նրանց չափից շատ պանիր ու զինի սիրելի ու ճանփորդելը, որը զուգորդվեց սահիկահանդեսի ցուցադրմամբ:

Հանդիսատեսը, հիացած քաղցրալեզու ֆրանսերենով և բեմական ծիծաղաշարք դրվագներով, ծափողջույններով թնդացնում էր դաիլիքը:

Միջոցառումը համեմված էր ֆրանսիական գեղեցիկ և ներդաշնակ պարային կատարումներով ու երաժշտությամբ: Դաիլիքը զարդարված էր ֆրանսիական և հայկական դրոշներով ու երանգներով:

Միջոցառման նպատակն էր ձևավորել սեր և հետաքրքրություն ֆրանսերեն լեզվի նկատմամբ, կարևորել ֆրանսիական արվեստի դերը միջնադարային կապերի ամրապնդման գործում՝ զուգահեռներ անցկացնելով հայկական և ֆրանսիական բարեկամական կապերի միջև:

Ամսան չմնաց նաև անգլերենի ուսուցչուհի և օտար լեզուների մեթոդիկական նախագահ Ստելա Մկրտումյանը, որը կազմակերպել և անց է կացրել միջոցառում-վիկտորինա բարձր դասարանների աշակերտների միջև: Վիկտորինային մասնակցում էր 8-րդ և 9-րդ դասարանների աշակերտներից խմբավորված երեք թիմ՝ SUNSHINE, STAR և VICTORY: Միջոցառումն անցավ ջերմ ու աշխույժ մթնոլորտում: Աշակերտները լավ տիրապետում էին իրենց անցած դասանյութին: Այն շատ հետաքրքիր ու բովանդակալից էր, կրում էր ուսուցողական բնույթ: Ընդմիջմանը ուսուցչուհին անակնկալ մատուցեց աշակերտներին՝ ցուցադրելով տեսասահիկ, որն ընդգրկում էր անգլերենի ժամին տարբեր ժամանակահատվածներում կատարված աշակերտների մասնակցությամբ նկարներ (Pizza Party, Drawing on and learning the names of the animals): Միջոցառման ավարտին հաղթող SUNSHINE թիմն արժանացավ ժյուրիի գովասանքներին ու խորհրդանշական նվերների:

Մրցույթի նպատակն էր բարձրացնել սովորողների հետաքրքրասիրությունը անգլերեն առարկայի նկատմամբ: Միջոցառումը բավականին հագեցած էր:

Մերի ՀԱԿՈՒՅԱՆ

ԴԻՄԱԳԻՑ

ԿՈՉՈՒՄՈՎ ՈՒՄՈՒՑԻՉ



Ուսուցիչը սոսկ մասնագիտություն չէ, այլ բարձր ու պատասխանատու կոչում: Նրան է վստահված սերնդի ոչ միայն ուսուցման, այլև դաստիարակության դժվարին ու պատասխանատու գործը: Ժամանակակից տեխնոլոգիաների աննախադեպ զարգացման շրջանում ուսուցչի դերակատարությունը դարձել է առավել կարևոր ու պարտավորեցնող: Դեռևս նրա աշխատանքի որակից է կախված, թե վաղը ինչ անհատներ կյանք կմտնեն, ովքեր կծնվորեն մեր հանրությունը՝ որոշելով պետության ապագան:

Ուսուցչի աշխատանքին, դերին, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններին անդրադառնալու նպատակով հանդիպեցի վաստակաշատ մանկավարժ, արդեն վաստակած հանգստի անցած Արդա Սաղյանին: Ուսուցչուհին, ինչպես նախկին գործընկերներն ու աշակերտներն են փաստում, գործունեության առաջին իսկ օրից մինչև հիմա հավատարիմ է կոչմանը:

Ծնվել է 1946թ. Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղում՝ Ալեքսան և Նադեժդա Սաղյանների ընտանիքում: 1953թ. հաճախել է հայրենի գյուղի 7-ամյա դպրոցը, 1963թ. ոսկե մեդալով ավարտել Գաղարտու միջնակարգ դպրոցը: Զրույցի ընթացքում Ա.Սաղյանը պատմում է մանկության դառը հուշերը՝ կապված Ստալինի անձի պաշտամունքի հետ. «Այսօրվա պես հիշում եմ, երբ 1953թ. մահացավ Ստալինը, բոլորը լաց եղան, ես էլ նրանց հետ՝ չգիտակցելով, որ այն մեզ համար ու նաև շատ-շատերի, փրկություն էր: Դա շատ, որ մասնագիտությամբ մանկավարժ էր, Գաղարտունու մեծ պատերազմի ժամանակ գերեզմարակառուցիչ էր, վերադառնալով՝ որակվել էր թշնամի ու զրկվել ուսուցչի աշխատանքից: Միայն տարիներ անց, անցնելով բազում զրկանքների ու դժվարությունների միջով, նրան թույլատրվեց աշխատել իր մասնագիտությամբ», - պատմում է նա:

1964թ. ամուսնացել է համագյուղացի Գրանտ Ստեփանյանի հետ և աշխատանքի ընդունվել Մարտունու պիոներ տանը: 1965-ից ժողկրթբաժնի մեթոդ-կաթինետի մեթենագրուհի էր, զուգահեռ նաև աշխատել է պիոներտանը՝ որպես նկարչության խմբակավար: 1968թ. երկու երեխայի մայր Ա.Սաղյանն ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական բաժնի՝ հեռակա կարգով:

Երրորդ կուրսն ավարտելուց հետո աշխատանքի է ընդունվել Մարտունու 8-ամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի և երկարօրյա խմբի դաստիարակչուհի: Այնուհետև մանկավարժական գործունեությունը շարունակել է Մարտունու միջնակարգ՝ այժմ հ.1 հոսքային դպրոցում: 2010թ. այնտեղից էլ անցել է վաստակած հանգստի:

2000-2001 ուստարում արժանացել է «Տարվա լավագույն ուսուցիչ» կոչմանը: 2010թ. ԱԶ նախագահի կողմից պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով: Արժանացել է ԶԶ լեզվի տեսչության և բազմաթիվ այլ պատվոգրերի:

Գինգ երեխայի մայր մանկավարժը մանկուց է երազել բազմադրամ ընտանիքի մասին: Մեծանալով փոքր ընտանիքում ծնողների ու եղբոր հետ, հոգու խորքում որոշում է կայացրել ունենալ շատ երեխաներ, որ տղան եղբայր ունենա, իսկ աղջիկը՝ քույր: Իր երեխաներին նա համարում է գեղեցիկ ծաղկեփունջ: Տան հոգսերի հետ հարթահարել է կյանքի բոլոր դժվարությունները, ինչպես ինքն է ատում՝ շնորհիվ համերաշխ ընտանիքի: «Երջանիկ ընտանիք ունենալու համար պետք է գնալ փոխզիջման, փոխըմբռնումի, անհրաժեշտության դեպքում՝ անձնագրիության, իհարկե, նաև լինել սիրված ու գնահատված: Ես միշտ երազել եմ, որ իմ երեխաներն ստեղծեն իմ ընտանիքի պատճենը», - ասում է նա:

Զանելի ու ջերմ մթնոլորտում կայացած զրույցի ընթացքում վաստակաշատ ուսուցչուհին դր-

վագներ վերհիշեց դասավանդման տարիներից, որոնց ընթացքում տեսանելի է դարձել նրա անսահման սերն ու հարգանքը դեպի գիր ու գրականություն ու նստարանին նստած աշակերտը, որը փոխադարձ է եղել:

Անդրադառնալով ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությանը՝ նա ընդգծում է. «Ուսուցչի և աշակերտի միջև հարգանքը ծնվում է առաջին հանդիպման ժամանակ, քանի որ աշակերտն ամենատես է և զգայուն՝ տեսնում է ուսուցչի տրամադրող կեցվածքը, պահվածքը, խոսելաձևը, հարգանքը, մասնագիտական կարողությունները: Անտեղի վիրավորանքը, պիտակ տալն ավելորդ է: Ես միշտ աշխատել եմ տեսնել մարդուն, անգամ «վատիկ» աշակերտն ունենում է շատ գնահատելի կողմեր: Եվ վերջապես՝ միայն գիտելիքով չէ, որ որոշվում է մարդու էությունը»:

Արդեն ութ տարի է, ինչ վաստակաշատ մանկավարժը վայր է դրել դասամատյանը, բայց շարունակում է իր ավանդ ունենալ սերնդի դաստիարակության գործում. սիրելի տատիկին է վստահված թողնելով տնային հանձնարարություններում օգնելը, նաև աշխատում է դպրոցականների հետ, մասնագիտական հարցերով սիրով օգնում իրեն դիմողներին:

Ծանոթ լինելով ժամանակակից դասավանդման մեթոդներին՝ նա համեմատականներ է դնում ավանդակալի և նորի միջև: «Ես չեմ դատապարտում ժամանակակից մեթոդները, բայց կարևորում եմ ուսուցչի խոսքը: Ժամանակակից տեխնոլոգիաները պատմեց են առաջացնում գրքի և աշակերտի միջև, մինչդեռ գիրք կարդալն առավել տպավորիչ է՝ տողերի արանքում տեսնում ես ներկայացվող հերոսին, մտովի դառնում իրադարձությունների ակամատեսը», - ասում է նա:

Թռչակառու մանկավարժի հետ մենք անդրադարձանք ներկա սերնդի դաստիարակությանը, զարգացածությանն ու արժեքների հանդեպ ունեցած վերաբերմունքին: Եվ նա հետևյալ համոզմունքը հայտնեց. «Բնականաբար, կյանքն առաջընթաց է ապրում, օրեցօր ավելի են զարգանում տեխնիկական միջոցները, որոնք շատ հաճախ շեղում են աշակերտին: Բազմակողմանի զարգացած մեթոդյա աշակերտին ճիշտ ուղղորդելն առաջին հերթին ուսուցչի պարտքն է»: Ըստ նրա՝ սերնդի սխալ դաստիարակության գործում մեղքի բաժին ունեն ծնողները, քանի որ այլ է այսօր նրանց մոտեցումը դեպի կրթությունը և ուսուցիչը:

Խոսելով ուսուցչի դերակատարության մասին՝ նա կարևորեց «ուսուցիչ» բառն իր մեջ ներառում է և՛ մանկավարժ, և՛ հոգեբան, և՛ դաստիարակ հասկացությունները, իսկ դասատուն սոսկ դաս տվողն է՝ գիտելիք մատուցողը: Ծատ կարևոր է մասնագիտական պատրաստվածությունը, նախապատրաստված դասարան մտնելը, նաև՝ ինքնակրթությունը: Կիրառվող մեթոդներին զուգահեռ դասավանդման ընթացքում պետք է օգտագործել սեփական հնարներ՝ ապահովելով ուսուցանելիքի մատչելիությունը: Անաղարտ հայերենով դաս մատուցելը և պարտադիր հանգամանք է»:

Ա.Սաղյանը պահարանից հանեց տասնամյակների պատմություն ունեցող նկարներ, որոնցից յուրաքանչյուրը ստեղծել է սեփական դասը լիարժեք կազմակերպելու և անցկացնելու նպատակով: Սերը դեպի մանկավարժություն, արվեստ, մասնավորապես՝ երաժշտություն և նկարչություն, նրա դեպքում պատահական չէ. դրանք Սաղյանների գերդաստանում փոխանցվում են գեներտիկորեն: Նրա հայրը և հորեղբայրը նվագում էին երաժշտական գործիքներ, նկարչի մասնագիտություն է ընտրել եղբայրը: Թոռները նույնպես ժառանգել են նկարչելու շնորհը, որի մասին վկայում են տան անկյուններում տեղադրված նկարները:

Ավելի քան երկու ժամ տևած մեր զրույցն անցավ ակնթարթի պես: Մանկության և դասավանդման տարիներից ներկայացրած հիշողություններն ու դրվագները թողեցին հաճելի տպավորություն, ինչը թույլ տվեց նրա մասին կազմել հետևյալ կարծիքը. քառասունվեց տարվա մանկավարժի վաստակ ունեցող ուսուցչուհին իր նվիրումի շնորհիվ այսօր վայելում է հին ու նոր սերունդների, նախկին գործընկերների, շրջապատի ու հարազատների սերն ու հարգանքը՝ բարձր պահելով ուսուցչի վեհ կոչումը:

**Անուշ ԱՍՐԻԲԱԲԱՅԱՆ
ք. Մարտունի**

Շնորհավորանք

ՎԱՍՏԱԿԵ ԱՐԴԱՐ, ԽԻՂՃԸ՝ ՄԱՔՈՒՐ



Աշխարհ գալով՝ մարդիկ ապրում են տարբեր կերպ: Արժանապատիվ ապրելու համար պետք է հասարակության մեջ ունենալ հարգանք, պատիվ, սեր, կշիռ: Իսկ այս ամենը ձեռք բերելու համար հարկավոր է բարեխիղճ աշխատանք, անսահման նվիրվածություն, անբասիր բնավորություն, մաքուր խիղճ...

Կարելի է անվերջ թվարկել բազում այլ բարեմասնություններ, որոնցով օժտված է Ասկերանի շրջանի հանձնարարական միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի Էլմիրա Բաղդասարյանը, որի 60-ամյակը լրացավ վերջերս: Այդ 60 տարիներից մոտ 40-ը նա անմնացորդ նվիրել է մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը: Նրա կյանքը համակնվիրաբերում է ընտրած մասնագիտությանը, սեր ու գորովանք՝ սիրելի սաներին, ընկերներին, ընտանիքին, իսկ մեծագույն պարգևը՝ անչափ սերն ու խորին երախտագիտությունը հարյուրավոր սաների, որոնցից շատերը, հետևելով սիրելի ուսուցչուհուն, ընտրել են ուսուցչի վեհ ու պատվավոր, դժվարին գործը:

Ծնվել է 1958թ. Արցախի աշխարհի հիմնավոր գողտրիկ անկյուններից մեկում՝ Մարտակերտի շրջանի Գառնաբար գյուղում: Գերագույն գնահատականներով ավարտելով դպրոցը՝ ընդունվում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, որն էլ ավարտելուց հետո աշխատանքի է անցնում Ասկերանի շրջանի հանձնարարական գյուղում: Այստեղ էլ ամուսնանում է, երեխաներ ունենում, որոնք նույնպես հետագայում մանկավարժություն են ընտրում:

Տիկին Բաղդասարյանի յուրաքանչյուր դաս մի գեղեցիկ ստեղծագործություն է ու նորարարություն, հաճելի անակնկալ:

Վարպետ ուսուցչուհու հարուստ մանկավարժական փորձը, հիրավի, արժանի է լուրջ ուշադրության, տարածման ու գնահատման: Շնորհաշատ ուսուցչուհին այն բացառիկներից է, որ իր ողջ կյանքն ապրել է՝ շուրջը սփռելով սրտի հուրը, հոգու ջերմությունն ու լույսը:

Է. Բաղդասարյանը, իրավամբ, Արցախի աշխարհի արժանավոր դուստրերից է, որին կարելի է համարել Արցախյան ազատամարտի ոգեղեն առաջամարտիկներից մեկը: Ով թեկուզ մի անգամ եղել է նրա դասերին, կհաստատի մեր խոսքը: Նրա հայրենաշունչ դասերն ու կազմակերպած միջոցառումները ոգի և ուժ, թև ու թռիչք են տալիս աշակերտներին, նրանց սրտում բորբոքում ու վառ պահում հայրենասիրության անմար ջախջ: Մեր սրբազան հողի համար նահատակված նրա սաներից ամեն մեկը, անկասկած, ռազմի դաշտ է մեկնել՝ ունկերում նրա ձայնը՝ պայքարի, ազատության հրով բորբոքում: Մեզինք շատերը, երբ Արցախում իրավիճակը լարվում է, հայացքն ուղղում են նրան և անհամբեր սպասում նրա հուսադրող խորհուրդներին: Նա մեր «բաղաբալան տեսաբանն» է ու մեկնաբանը:

Շուրջ 18 տարի եղել է դպրոցի փոխտնօրենը: Այս պաշտոնում ևս գերագույն է դրսևորել իրեն և արժանացել պարգևների: Սակայն տիկին Բաղդասարյանի համար ամենամեծ պարգևը երևի թե իր աշակերտների հոծ բազմության անկեղծ համակրանքն է: Նրանք այսօր միանում են մեր շնորհավորանքներին ու ցանկանում նոր հորելյաններ, ինչպես ինքն է կատակով ասում, ապրի՝ 150 տարի: Թող հրաշք կատարվի, նա արժանի է դրան: Իսկ եթե, այնուամենայնիվ, հրաշք չլինի, միևնույն է, նա կապրի՝ քանզի ուն սիրում են, չեն մոռանում, նա միշտ ապրում է սերունդների հիշողության մեջ:

Իսկական մանկավարժ, նուրբ հոգեբան, լավ գործընկեր, բարի խորհրդատու, կամեցող քույր, աջակցող հարևան, անկրկնելի մայր, հրաշալի տատիկ, մեծատառով մարդ, ծնունդը շնորհավոր:

Մենք սիրում ենք Ձեզ, հպարտանում Ձեզնով և հավատում, որ դեռ հպարտանալու առիթներ շատ կունենանք:

*հանձնարարականի միջնակարգ դպրոցի
մանկավարժական կոլեկտիվ*

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ



Շնորհավոր ծնունդը, մեր սիրելի ավագ ընկեր և բարեկամ:

Աշակերտների մեջ աշխատասիրության սերմնացանն արժանի է դրվատանքի: Նա մանուկների հետ իրեն մանուկ է զգում, նրանց հոգու անմեղությունը, անկեղծ ծիծաղն ու զարմանքը նրա համար դառնում են էներգիայի անսպառ աղբյուր: Նրա դեկավարած դասարաններում տիրում է համերաշխության մթնոլորտ:

Այսպիսին է իր գործին նվիրված ուսուցչուհի Լիլյա Վարդանյանը, որի 60-ամյակը լրացավ վերջերս:

Ծնվել է 1958թ. դեկտեմբերի 13-ին՝ մտավորականի ընտանիքում: Սովորել է Ստեփանակերտի հ.8 միջնակարգ դպրոցում: 1975-1979 թթ. սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: Նույն թվականից առաջօր դասավանդում է հարազատ դպրոցում:

Մասնագիտական հոգվածներով հանդես է եկել գիտամանկավարժական պարբերականներում: Երկրին մատուցած ծառայությունների և ներդրած ավանդի համար վաստակաշատ ուսուցչուհին 2016թ. արժանացել է ԼՂՂ վարչապետի հուշամեդալին:

Շնորհավորում ենք հորելյարին, մաղթում ամենայն բարիք, ուժ ու եռանդ այս աստվածաշնորհ աշխատանքում:

*Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ.8 մ/հ
դպրոցի մանկավարժական կոլեկտիվ*

ԹՈՂ 2019-Ը ՄԻԱՅՆ ՀԱՂՈՒՄԱԿՆԵՐԻ ՏԱՐԻ ԼԻՆԻ

1



Արցախի մարզական տարին ամփոփում է ԱՅ ԿԳՍՆ սպորտի վարչության պետ, սամբոյի եվրոպայի չեմպիոն, աշխարհի կրկնակի չեմպիոն, աշխարհի գավաթակիր, սպորտի վաստակավոր վարպետ Աշոտ ԴԱՆԻԵԼՅԱՆԸ:

- Պարոն Դանիելյան, ինչպիսի՞ն էր 2018 թվականը Արցախի մարզաշխարհի համար:

- Եթե համեմատենք 2017-ի հետ, 2018-ը ավելի արդյունավետ տարի էր Արցախի մարզաշխարհում: Այդ մասին նաև տարեվերջին ԼՂՀ նախագահի կողմից պարգևատրված մարզիկների քանակն է խոսում, հաղթանակներ բերած մարզածների բազմազանությունը: Բերենք մի քանի տվյալներ. այս տարի Արցախի մարզիկները մասնակցել են աշխարհի շուրջ 20 առաջնության տարբեր տարիքային խմբերում: Մասնակցների թիվը՝ 76. ունեցել ենք մեկ 1-ին, երկու՝ 5-րդ, տասներեկ՝ 3-րդ տեղ: 75 մարզիկ մասնակցել է Եվրոպայի 25 առաջնությունների. ունենք ինճ 1-ին, տասներեկական՝ 2-րդ և 3-րդ տեղեր: 39 անգամ՝ 238 հոգի, մասնակցել են միջազգային տարբեր մրցաշարերի, ունենք երեսուն 1-ին, քառասներեկ՝ 2-րդ, քսանյոթ՝ 3-րդ տեղ: Իսկ 33 125 առաջնություններին մասնակցել է 1438 հոգի: 1-ին տեղում ունեցել ենք 116 հոգի, 2-րդ տեղում՝ 87, 3-րդ տեղում՝ 97: Մեր մարզիկները նաև մասնակցել են 30 ուսումնամարզական հավաքների՝ 253 հոգի, իսկ մարզչական սեմինար-պարապմունքների մասնակցել է ինճ հոգի՝ Հայաստանում և արտերկրում: Կարող են ասել, որ տարեցտարի ավելանում է մեր մարզիկների և սպորտով պարապողների թիվը: Եվ դա շատ գովելի է, որպեսզի կարողանանք մեր հանրապետությունում սերմանել առողջ ապրելակերպ: Առողջ ապրելակերպը մանուկ հասակից պետք է սովորեցնել երեխային, որպեսզի նա այդ տարիքից գիտակցի, թե ինչ է պայքարելը, դժվարությունները հաղթահարելը, հաղթանակի բերկրանքը:

- **Նշեք ճանաչված մարզիկներից մի քանիսին:**
- Այս տարի մենք ունեցանք մեծահասակների Եվրոպայի և աշխարհի չեմպիոն կիոկուշին կարատե մարզածից՝ Արթուր Առուշանյան, պատահիներից՝ Վարդան Դալայան, երիտասարդներից Եվրոպայի չեմպիոն Միխայիլ Միխայրյան՝ կարատե, իսկ ուշուից աշխարհի երիտասարդական առաջնությունում չեմպիոն ունեցանք՝ Արսեն Բաղդասյան, սամբոյի գծով մարզապի գավաթակիր դարձավ Սերգեյ Կարապետյանը: Տարին եզրափակեցինք չեմպիոններով: Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ունեցանք աշխարհի և Եվրոպայի 3 չեմպիոն:

- **Ամփոփենք. ո՞ր մարզածներից են մեր մարզիկները պարգևատրված արժանացել, ավելի շատ ո՞ր մարզածներն են տարածված Արցախում:**

- Կարելի է ասել՝ գրեթե բոլոր մարզածներից ունենք արդյունքներ. կիոկուշին կարատեից, ուշուից, օլիմպիական կարատեից այս տարի ունեցանք Հայաստանի չեմպիոն: Սամբո մարզածից ամենից շատ արդյունքներն ունենք և՛ մեղալների, և՛ մարդկանց քանակով: Ունենք խառը մենամարտերից (MMA), մուայթայից, ուժային եռամարտից: Երկար տարիներից հետո այս տարի բռնցքամարտից ունեցանք Եվրոպայի մրցանակակիր (Թերթ գյուղից)՝ Մանվել Պետրոսյանը, շախմատից, ծյուրոյից ևս ունենք: Արդյունքներ ենք ապահովել նաև Հայաստանի առաջնություններում՝ թաքսիդոտ, սեղանի թենիս, աթլետիկա: Տղամարդկանց վոլեյբոլի հավաքականը 1-ին տեղ գրավեց Հայաստանի առաջնությունում, նույնը և՛ բասկետբոլի թիմը: Հանդիսով տղամարդկանց թիմը 2-րդ տեղ գրավեց, կանանց վոլեյբոլի թիմը՝ 3-րդ տեղ:

- **Իսկ ի՞նչ է արվել սպորտը մասսայականացնելու առումով:**

- Այս ուղղությամբ առաջին տարին չէ, որ աշխատում ենք: Շարունակել ենք մեր ծրագրերը ինչպես նախկին տարիներին, այնպես էլ ինճ: Ունենք զանգվածային շատ միջոցառումներ՝ սկսած նախադպրոցական հիմնարկներից մինչև 12-րդ դասարան: Նաև 63 տարեկանից բարձր անձանց համար ենք կազմակերպում միջոցառումներ, ինչպիսին է, օրինակ, «Լավագույն մարզական ընտանիք»-ը, որը տարիներ ի վեր կազմակերպվում է մեզ մոտ: Սպորտի մասսայականացումը միայն այն չէ, որ մարզիկները գալիս են մարզադահլիճ ու պարապում: Ամեն մարզադահլիճ չէ, որ կարող է ընդունել 20-30 մարդ:

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱՇԽԱՐԿԻ ՄԵՐ ԱՄՏՂԵՐԸ ԱՐԹՈՒՐ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ



Հերթական հաղթանակն արձանագրեց ոչ միայն «Լուսարար-ի» ընթերցասեր բարեկամների, այլև ողջ մարզաշխարհի կողմից սիրված, մարզական հազվագյուտ տաղանդի եւ ընդունակությունների տեր մարզիկ Արթուր Առուշանյանը: Դեկտեմբերի 6-10-ը Բուլղարիայի Վառնա քաղաքում կայացավ Կիոկուշին կարատեի պատահիների աշխարհի եւ մեծահասակների Եվրոպայի առաջնությունը: Արցախից մեկնած 8 պատանի մարզիկներին չհաջողվեց մրցանակային տեղեր գրավել աշխարհի առաջնությունում: Մինչդեռ աշխարհի կրկնակի չեմպիոն Արթուր Առուշանյանը, փայլուն դրսևորելով իրեն Եվրոպայի առաջնությունում, գրավեց 1-ին պատվավոր տեղը 27 երկիր ներկայացնող 200 ուժեղագույն մարզիկների մեջ: 25-ամյա չեմպիոնը հայրենիք վերադարձավ ոսկե մեդալով, երկու գավաթով: Լավագույնս ցուցաբերելով կամքի ուժ՝ Արթուրը պարգևատրվեց նաև «Մայքարոզ ոգի» մրցանակով:

Դեկտեմբերի 16-ին Արցախի «Օյանա» կիոկուշինկայ կարատե դո Ֆեդերացիայում կազմակերպվեց որակավորման քննություն, որն ընդունելու էր եկել 33 կարատե կիոկուշինկայ կարատե դո ազգային ֆեդերացիայի նախագահ, սե գոտի 4-րդ դաս Ապարտակ Գասպարյանը (Ա. Առուշանյանը մրցումներին նախապատրաստվում է նրա մոտ): Օրը հանձնվորեն համընկավ չեմպիոնի ծննդյան օրվա եւ նրա ու մարզչի հետ ունեցած մեր հարցազրույցի հետ:

Արթուր Առուշանյանը Եվրոպայի առաջնությունում հաղթողի կոչմանը հասնելու ճանապարհին ունեցավ երեք մենամարտ: Առաջինը Եվրոպայի մրցանակակիր հունգարացի մարզիկի հետ էր: Արթուրի մեկնամարտը մրցակիցը լարված վիճակում էր, մարտի ընթացքում մի քանի անգամ կորցրեց հավասարակշռությունը՝ միավորներ արձանագրելով հօգուտ Արթուրի: Իսկ Արթուրը խոստովանեց, որ առաջին մարտում այնքան էլ լավ չցուցաբերեց իրեն: Մինչ իր մարտերն սկսելը հետեւում էր պատանի մեր սաների մարտերին որպես մարտավկա, որն իրենից շատ ենթերիս է խլում: Չնայած

սպորտին հատուկ են նաև պարտությունները, բայց տրամադրության որոշակի անկում ապրեց այն հանգամանքից, որ Արցախից ու Հայաստանից մեկնած պատանի մասնակիցներից ոչ մեկին չհաջողվեց հաղթանակի հասնել: Ինչպես ինքն է նշում՝ տատամի է մտել գրեթե ուժասպառ. գուցե եւ մրցակցի լարված լինելն է խթանել Արթուրի հաղթանակին առաջին մարտում: Իսկ ահա երկրորդ մենամարտում, որը կիսաեզրափակչում էր, բուլղարացու հետ պայքարելիս գործի դրեց կարողությունները: Հատուկ նշեց, որ սկզբունքորեն էր տրամադրված մարտին, քանի որ նույն մրցակիցն անցած անգամ կրկին Վառնայում կայացած առաջնության ժամանակ հաղթել էր կիոկուշին կարատեի մեր համերկրացի մարզիկ Դավիթ Ավետիսյանին: Բացարձակ հաղթանակ տանելով «տանտեր» մրցակցի հանդեպ՝ Արթուրը մտավ եզրափակիչ, որտեղ հանդիպեց վրաստանցի տիտղոսակիր մարզիկ Անդրեյ Ջիչենկոյին: Առաջին ռաունդում ավարտվեց ոչ-ոքի: Շուրջ 10 վայրկյան տեսած երկրորդ ռաունդում սկսվեց թե՛ պայքար, որում անպակաս էին վնասվածքները: Վրաստանցի մարզիկը չթույլատրված հարվածներ էր կատարում: Արթուրը ընթացիկ վնասվածք ստացավ: Պայքարի թե՛ ոգին իրար էր բախել ուժեղագույն մարզիկների, որոնց համար խանգարիչ հանգամանք չէր թափվող քրտինքն ու այրումը: Տատանողական էր հաղթանակը, եւ ահա Արթուրը, լսելով իր մարտավկա Սպարտակ Գասպարյանի հուշումը, ոտքի պտույտ-հարվածով նոր դառնի ենթարկեց մրցակցին եւ միավորների առավելությանը հաղթանակ արձանագրեց:

Մարզիկը, որի համար սովորական են դարձել հաղթանակները, առանձին շեշտադրումով է պատմում իր զգացողությունների մասին. «Աննկարագրելի պահ է, երբ քո հաղթանակով ստիպում են միջազգային հանրությանը խոնարհվել ազգիդ իմնից: Ներքին ցնծությանը չափ չի լինում, հաստակապես երբ մարզապիսի ներկա են լինում թուրք, ադրբեջանցի մարզիկներ, որոնք նույնպես ստիպված են լինում զգաստ կանգնել: Հատկանշական է, որ վրաստանցու հետ մենամարտ դառնում էր ադրբեջանցի մրցակար: Ուրախ եմ, որ համոզիչ հաղթանակ արձանագրեցի, անգամ ադրբեջանցին չկարողացավ միավորներ չտալ»:

Մարզիչը՝ Սպարտակ Գասպարյանը, հպարտությամբ եւ անկեղծ ուրախությամբ է խոսում Արթուրի մասին՝ նրան բնորոշելով հետեւյալ կերպ. «Կիոկուշինի լեգենդ, որը տատամիի վրա ամուսն է խնամար: Նրա հետ հեշտ է աշխատել, կես խոսքից հասկանում է: Օժտված է մարզական եւ մարտավարական բարձրակարգ մտածողությամբ: Յուրաքանչյուր մարզիկ ունի իր ձեռագիրը, որն ուսումնասիրելով՝ կարելի է պատկերացում կազմել, թե մարտի ժամանակ ինչ տեխնիկական հնարներ կարող է կիրառել եւ մշակել այնպիսի մարտավարություն, որը խոցելի տեղերին կխփի: Բայց Առուշանյանի

ձեռագիրը կարգալ հնարավոր չէ, նրա տեխնիկան եւ մաներելու կարողությունն անկանխատեսելի են: Բազմակողմանի զարգացած լինելու եւ շուտ ըմբռնելու շնորհիվ թե՛ մարտի ժամանակ իսկույն կարողացավ կիրառել իմ հուշումը, որը մշակել էինք վերջին պահին: Մրցակիցը կարծում էր, թե Արթուրը ձեռքբերով պետք է աշխատեր, այդպես էլ կար, բայց մի վայրկյանում մարտավարությունը փոխեցինք: Կարելու էր՝ միեւնույն մտածելակերպն ունենալ, ես՝ որպես մարտավկա, ինքը՝ մարտիկ: Դեռ չավարտած արտահայտությունս՝ Արթուրը ոտքի պտույտով հարված հասցրեց մրցակցին՝ ենթարկելով նոր դառնուցի: Առանձնաճանաչում է բնավորության դրական գծերով: Կիոկուշինի աշխարհում մտածել չունի, «միջազգային բրենդ» կոչմամբ առաջատար մարզիկ է, մինչդեռ չի տառապում աստղալին հիվանդությամբ: Հաղթանակի բերկրանքը վայելում է միայն իր մարզչին խոնարհություն տալուց հետո, երախտագիտությամբ է արտահայտվում մարզական ճանապարհին իրեն ուղեկցողների մասին: Մեծ հպարտությամբ ենք նշում, որ Արթուրը հրավերներ է ստացել տարբեր երկրներում «մաթթեր-կլասեր» վարելու: Մրցույթ առ մրցույթ աճում է նրա տիտղոսների թիվը: Սա, իհարկե, ողջունելի է, բայց եւ ամենամեծ տիտղոսը լավ մարդ լինելն է, ինչը բնորոշ է Արթուրին»:

Թե ինչքան կտելի օրինակելի չեմպիոնի մարզական կարիերան, դժվար է կանխատեսել: Արթուրն ինքն էլ դժվարանում է հարցին պատասխանել: Բայց որ հանգստանալու ժամանակ չունի, խոսում է այն մասին, որ առջեւում կրկին մրցումներ են: Պատրաստվում է սեմինար-մարզումներ վարել Ուկրաինայում, Կոստա Ռիկայում: Նախապատրաստվում է 2019թ. Աստանայում կայանալից կիոկուշին կարատեի աշխարհի 4-րդ առաջնությանը, որին կնախորդեն տարբեր մարզահավաքներ: Ծրագրել են արթիկն 33 միջազգային մրցաշար անցկացնել՝ մերգույնելով առաջատար մարզիկների տարբեր պետություններից: Իսկ դեկտեմբերի 23-ին Կոկկասի առաջնությունն է:

Արտերկրում մշտապես մարզվելու եւ մարզչական գործունեություն ծավալելու զայնակից առաջարկներ պարբերաբար լինում են, բայց Արթուր Առուշանյանը նախընտրում է մնալ հայրենիքում, աշխատել իր հայ սաների հետ: Սիրում է հայրենիքն ու իր զբաղմունքը: Սպարտակ Գասպարյանն էլ համակարծիք է. «Արտերկրում շատ բան կարող ենք անել, բայց սիրելով մեր հայրենիքը, մնում ենք այստեղ՝ զարգացնելով կիոկուշին մարտարվեստը, պատրաստելով չեմպիոններ: Օգտվելով հնարավորությունից՝ ուզում ենք արտահայտել ցանկությունս. Արցախում թող այլևս պատերազմ չլինի, թող հաղթանակներն ու պարտությունները լինեն միայն տատամիի վրա: Բայց ովքեր պատերազմ չեն ուզում, պետք է պատրաստ լինեն դրան, ուրեմն բոլորս պետք է մարզվենք, կոփվենք ֆիզիկապես եւ հոգեպես»:

ՄԻՆԱՅԻՆ ՄԻՍԻՐԱՐՅԱՆ



Արցախի մարզաշխարհում տարեվերջը նշանավորվեց մեր մարզիկների փայլուն հաղթանակներով: Հերթական անգամ մեր աստղերը փայլեցին միջազգային մրցապարեզներում՝ փողկողացնելով հայոց եռագույնն ու զգաստ կանգնեցնելով միջազգային հանրությանը հայոց իմնից: «Կարատեի Միսիրյանը». այսպես են արտահայտվում մարզասերներն ու երկր-

պագուներն արցախցի կարատեիստ Միխայիլ Միսիրյանի մասին (համեմատում են աշխարհահռչակ ֆուտբոլիստ Զենիթի Միսիրյանի հետ): Միխայիլը ծնվել է 1999թ. մարտի 1-ին: Չորս տարեկանից սկսել է հաճախել կարատեի պարապմունքների հոր՝ Աշոտ Միսիրյանի ուղեկցությամբ, որը նույնպես կարատե էր պարապում: Մարտարվեստում առաջին քայլերն սկսել է Արցախում հայտնի մարզիչ Արամ Գևորգյանի հովանու ներքո, դասեր ու խրատներ քաղել նաև մարզիչ Ժիրայր Թովմայանից: Գոտեւորման առաջին քննությունը հանձնելու վերաբերյալ հետաքրքիր պատմություն ինճանք: 16 տարի է անցել այն օրվանից, երբ Միխայիլը հանձնեց առաջին քննությունը եւ ստացավ սպիտակ գոտի ու վկայական: Քննությունն ընդունելու նպատակով Արցախ էր եկել 33 ֆոդոկան կարատե դո Ֆեդերացիայի նախագահ, կարատեի վարպետ, սե գոտի 8-րդ դաս Կարեն Ավետիսյանը, որը հանդիսավոր հանձնել էր գոտիներն ու վկայականներ-

ը: Երբ Միխայիլի հերթը եկավ, մոտեցավ ստանալու վկայականը, ամուր բռնեց ու բաց չէր թողնում որոշ ժամանակ: Այդ պահին Կարեն Ավետիսյանը մարզադաբար կանխորոշեց, որ այս տղան մեծ ապագա ունի: Մարզիչ Ժիրայրը, մոտենալով Միխայիլի հորը, առանձնանշել էր, որ վարպետը հենց այնպես նման արտահայտություն չի անում, իսկպես երեխան տաղանդ ունի, պարզապես պետք է ուշադրություն դարձնել: Եվ ուշադրություն դարձրին: Այսօր վերինը է դարձել սկսնակ կարատեիստի անսովոր պահվածքը վկայականը ստանալիս: Ինչպես պատմում է հայրը, որը միաժամանակ եւ որդու մարզիչն է, գերդաստանով մտան կարատեի աշխարհ: Հորեղբայրը՝ շոտական կարատեի որ մարտարվեստի սեւ գոտի 4-րդ դաս, Արցախի ազգային կարատե դո Ֆեդերացիայի նախագահ Լեռնիկ Դալայանը, գործունեություն ծավալեց կարատեի զարգացնելու եւ մասսայականացնելու Արցախում: Երբայրերը նույնպես զբաղվեցին կարատեով: Հայրն անձամբ հետեւում ու

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՄԲԻՍՏՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ՈՍԿՈՎ, ԱՐՄԱԹՈՎ, ԲՐՈՆՉՈՎ



Սամբո մարզածեւը ծագել է խորհրդային տարիներին եւ համարվում է մարզական ընթացակարգի խորհրդային տեսակ: Սամբոն ինքնապաշտպանական հնարների համակարգ է, որը մշակվել է 1930-ականներին «Դինամո» կազմակերպության մարզական անձնակազմի կողմից՝ զորավարժելու Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի սպաներին եւ ներքին զինուժը: Ռուսերենից թարգմանվում է որպէս ինքնապաշտպանություն առանց զենքի (CAMBO-самооборона без оружия): Սամբոն ոչ միայն մրցապայքար է եւ առանց զենքի օգտագործման հակառակորդին հակազդելու միջոց, այլեւ դաստիարակության համակարգ, որը նպաստում է բարոյականային հատկությունների, հայրենասիրության եւ քաղաքացիականության զարգացմանը: Գոյություն ունեն սամբոյի մարտական եւ սպորտային տեսակներ:

Գախցիներին հոգեհարազատ լինելու պատճառներից մեկը դա է: Արցախում սամբոյով զբաղվում է մոտ երկու հարյուր մարզիկ, ընդ որում՝ մայրաքաղաքից բացի սամբոն մասսայականացված է Մարտունիում, Գիշիում, Գարտարում, Շուշիում: Բոլոր մարզածեւերով պարապողների հաջողությունների հասնելու հարցում մեծ դեր ու նշանակություն ունեն մարզիչները: Արցախում սամբոն զարգացնելու եւ չեմպիոններ պատրաստելու գործում մեծ ներդրում ունի ԳՅ եւ ԱԶ վաստակավոր մարզիչ Էռնեստ Միրզոյանը: Նրա սաները հերթական անգամ հաղթանակ եւ մրցանակային տեղեր արձանագրեցին վարկանշային մրցաշարում: Եվրոպայի հաղթանակի պատվանդանը կրկին հյուրընկալեց արցախցի մարզիկի, որի շնորհիվ հայոց դրոշմ ու օրհներգը կրկին փառավորվեցին միջազգային մրցաշարակալում: Դեկտեմբերի 14-17-ը Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում կայացավ Եվրոպայի սամբոյի գավաթի խաղարկություն, որին մասնակցում էր 26 երկիրներից: Մարզիչ Էռնեստ Միրզոյանի գլխավորությամբ ԳՅ հավաքականի կազմում հանդես եկած՝ սամբոյի արցախցի չեմպիոններ Սերգեյ Կարապետյանը, Դավիթ Պետրոսյանը, Դավիթ Գրիգորյանը եւ Վահագն Չալյանը պատմեցին մեծահասակների միջեւ Եվրոպայի գավաթի խաղարկությունում իրենց գոտեմարտերի մասին: Սերգեյ Կարապետյանը, որը հանդես եկավ 74 կգ քաշային կարգում (մարտական սամբո), երեք մարտում հաղթելով՝ դարձավ չեմպիոն: Առաջին եւ երկրորդ մարտերում հաղթեց ֆրանսիացի եւ իտալացի մարզիկներին եւ մտավ եզրափակիչ փուլ: Եզրափակիչում ոտքի ցավեցնող հնարքով հաղթեց իսպանացի մրցակցին եւ արժանացավ առաջին տեղի: Սերգեյ Կարապետյանն Արցախում սամբոյի առաջին մարզիկն է, որը դարձավ Եվրոպայի գավաթակիր: Դավիթ Պետրոսյանը հաղթողի կոչը ստացավ կոչված ընդհանուր կոչումով: Գրիգորյանը հաղթեց իտալացի մրցակցին: Վահագն Չալյանը հաղթեց իսպանացի մրցակցին: Մարզիչները շնորհակալ եւ մարզիչ Էռնեստ Միրզոյանին սամբո մարզածեւում իրենց ունեցած հաջողությունների համար: Գոհ ու շնորհակալ եւ ԿԿՍ Մախարաբադում սամբոն զարգացնելու, մասսայականացնելու եւ մարզիկներին ընդառաջելու համար: Գնալով ավելանում է մարզիկների թիվը, մատաղ սերունդն ավելի է ներգրավվում սպորտի աշխարհ, ինչը նպաստում է առողջ մարմնում առողջ հոգի ունենալուն:

Եւ համաշխարհային հռչակ ունեցող կարատեիստների, մարզիչների ու մրցավարների կողմից: Գործառնային մասնակցելով կարատեի սեմինար-մարզումների՝ Միխայիլը հավանության արժանացավ կարատեի աշխարհի վեցակի չեմպիոն, 12 անգամ Եվրոպայի չեմպիոն հռչակված, համաշխարհային կարատեի կատա մրցածուում Օլիմպիսի հասած իտալացի Լուկա Վալդեգրի կողմից, որի առաջարկով արցախցի մարզիկը մեկնեց Իտալիա՝ պարապմունքներ ունենալու նրա հետ: Բազում ուժեղագույն մարզիկներից Լուկա Վալդեգրի ընտրեց մեր հայրենակցին ու Աշխ, որ երկու տարվա մեջ օլիմպիական չեմպիոն կդարձնի նրան: Մոտենում են օլիմպիական մրցումները, որի շրջանակներում մեղալ նվաճելու համար Միխայիլը վճռականորեն է տրամադրված: Ուշագրավ է արտահայտվել Միխայիլի մասին Ֆոդոկան կարատեի համաշխարհային ֆեդերացիայի նախագահ, սեւ գոտի 10-րդ դաս, Եվրոպայի առաջնության գլխավոր կազմակերպիչ Իլյա Յորգան, որն առանձնանում է խիստ բնավորությամբ, մարզիկների հանդեպ բարձր պահանջկոտությամբ: Դիտելով Միխայիլի մեծամարտերը՝ նա այս կերպ է արտահայտվել. «Ես սիրում էի միայն ինձ եւ իմ կնոջը, բայց այս տղային էլ սիրեցի»:

Միխայիլը աչքի է ընկնում նաեւ դերասանական վարպետությամբ, ստացել է ակադեմիական կրթություն: 2013թ. հաղթել է արեւելյան մարտարվեստների վարպետ, լեգենդար կինոաստղ Բրյուս Լիի դերը (նրա մասին պատմող ֆիլմում) կատարելու քաթսինգում: Անվանի դերասան, կինոռեժիսոր Նիկիտա Միխայլովի գլխավորած նախագծում, որտեղ ներգրավված էին աներիկյան, ռուսական, հայկական նկարահանման խմբեր, Միխայիլը շուրջ մեկ տարի նկարահանվե-

լու աշխատանքով էր զբաղված: Հանգանքների բերումով (Ուկրաինայի պատերազմ) ֆիլմի նկարահանումը դադարեցվեց, բայց վերսկսվելու միտում ունի: Չեմպիոնի մասին հոր հետ գրուցելիս քանիցս լսեցիք մարտական ոգու եւ պայքարելու տենչի մասին: Որպես մարզիչ՝ գոհ է իր սանի ձեռքբերումներից, բայց որպես հայր՝ փորձում է մտահոգված է որդու ապրելակերպով: Մարտարվեստի պարապմունքները խլում են երիտասարդական տարիները, զրկում հաճույքներից, հետաքրքրություններից, որոնք համատեղելի չի ստացվում: Բայց միեւնոյն ժամանակ ողջ ընտանիքով աջակցում են Միխայիլին, ստեղծում բարենպաստ պայմաններ պատշաճ պարապելու համար: Միխայիլի դրսեւորած սերը դեպի մարտարվեստ, կամքն ու պայքարի ոգին անխախտ են: Ինչպես հայրն է ասում, սա միայն սպորտում հաջողության հասնելու պայքար չէ, այլ պայքար է Արցախի ճանաչման, գոյապայքարի հարցի լուծման: Շնորհակալ է Արցախի սպորտի վարչությունից, մարզիչներից, բոլոր սատար կանգնողներից, տատիկից ու պապիկից, երկրպագուներից, «Լուսարար» թերթից՝ սպորտի ոլորտում ուշադրության կենտրոնում պահելու, աջակցելու, անհատական հաղթանակներն ազգովի համարելու համար: Տեղին ընկնող կարատեի հիմնադիր Գիշին Ֆունակոչու հայտնի խոսքը. «Կարատեն եռացող ջրի նման է, եթե կրակը չպահեն նրա տակ, այն կսառչի»:

Վստահաբար կարող ենք ասել, որ մեր կրակոտ տղաների ձգտումները չեն սառչի, քանի որ հայտնությունն է թիկունքում, իսկ նրանք կշարունակեն փայլել որպես աստղեր հայրենիքի գլխավորներում: Թող 2019-ը միայն հաղթանակների տարի լինի ու, ամենակարևորը, լինի խաղաղություն:

Սոկրատես

ԹՈՂ 2019-Ը ՄԻԱՅՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՏԱՐԻ ԼԻՆԻ

Սպորտի մասսայականացման համար միջոցառումներ ենք կազմակերպում քաղաքների և շրջանների կոլեկտիվների միջև, մասնավորապես խաղային մարզածներից՝ ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, հանդբոլի մրցումներ, ամառային շրջանում թաղամասերի միջև անցկացվում է բակային ֆուտբոլ՝ «Կաշվե գնդակ»-ը: Մի քանի տարի ընդմիջում է եղել, բայց արդեն երրորդ տարին է՝ այն անց ենք կացնում: Ասեն, որ տարեցտարի և բակերի քանակն է ավելանում, և՛ երկրպագուների: Արդյունքում հիմնադրված մարզական մթնոլորտ է ստեղծվում: Ինչպես սկզբում ասացի, երեխաների մոտ սեր է առաջանում սպորտի նկատմամբ: Իհարկե, բոլորը չեն կարող դառնալ պրոֆեսիոնալ մարզիկներ, Եվրոպայի, աշխարհի չեմպիոններ, բայց սպորտը շատերի համար է դառնում ապրելակերպ: **- Ի՞նչ կասե՞ք մարզադասիչների, մարզահրապարակների մասին:** - Տարեցտարի դրանց քանակն ավելանում է: «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով Ստեփանակերտի Ազատամարտիկների փողոցում այս տարի կառուցվել է հանդբոլի դաշտ: Առաջիկայում պիտի կառուցվեն նոր մարզադասիչներ, ընթացքի մեջ է մարզանշակության համալիրի կառուցումը «Տաշիր գրուպ»-ի հովանավորությամբ: Շատ հովանավորներ կան, որ ցանկություն են հայտնում օգնել սպորտին՝ ստեղծել մարզակառույցներ, կահավորել: Շրջաններում էլ կան լավ մարզակառույցներ, ճիշտ է, ոչ ամեն տեղ, բայց մեծ մասում ունենք, ընդ որում՝ ավելի լավ, քան մայրաքաղաքում են: Ուղղակի մասնագետների պակաս ունենք, հատկապես մարզիչների կարիք կա շրջաններում: Օրինակ՝ նախանշյալ տարի ճարտար և Գիշի համայնքներում կառուցվել են մարզադասիչներ, բայց Ստեփանակերտից են մասնագետները գնում ու պարապմունքներ անց կացնում: Հուսով ենք, որ արդյունքները շուտով կերևան, և այդ համայնքները սեփական մարզիչներ կունենան: **- Կանդիդի պատմե՞ք ֆեդերացիաների մասին: Դրանք շատ են Արցախում:** - Ֆեդերացիաներն Արցախում 22-ն են, դրանք պետությունից աջակցություն են ստանում: Նոր ֆեդերացիաներ չեն ստեղծվել, ավելի շատ ուշադրություն ենք ուզում ուղղել օլիմպիական մարզածներին, որովհետև ցանկացած երկրում դրանք են ավելի մեծ տեղ տալիս, պետությունն ավելի շատ ճանաչվում է արանցով: Ունենք մարզածներ, որոնք այս տարի ՄՕԿ-ի կողմից ժամանակավոր ճանաչվում են ստացել: Մենապայքարային մարզածից ընթացմարտը, ձյուդոն օլիմպիական մարզածներ են, իսկ մուայթայը, սամբոն, քիք բոքսինգը ժամանակավոր ճանաչվում են ստացել ՄՕԿ-ի կողմից, երկի 2020թ. կորոնվի դրանց ապագան: **- Օլիմպիական անկախ մարզիչների երազանք է...** - Ամեն տարի մեր մարզիկները պարզատրվում են, բայց, ցավոք, օլիմպիական մարզածներից բարձր նվաճումներ դեռ չունենք: Մեր երազանքը դա է, և մեր աշխատանքները տանում ենք այդ ուղղությամբ: Օրինակ՝ կարատե մարզածը, որ մենք ունենք, ընդգրկված է 2020թ. օլիմպիական խաղերի ծրագրում: Այդ մարզածից հեռանկար ունենք. հետագայում մեր մարզիկները կկարողանան տեղ գրավել: Վստահ եմ, որ մեր երազանքը կիրականանա է. եթե ոչ օլիմպիական չեմպիոն, օլիմպիադային մասնակից կունենանք: Պետությունը ևս աջակցում է: Դա տեսանելի է թեկուզ պարզատրվողների քանակից. այս տարի ԼՂՀ Նախագահի և կառավարության կողմից պարզատրվել է 136 հոգի: Նրանց մեջ նաև բարձր նվաճումներ արձանագրած մարզիկների մարզիչներն են: Դրանական այդ պարզակերպ մեծ խթան են: Շատերն են ձգտում օգտվել այդ հնարավորությունից: Տարիներ առաջ մարզիկներին հոված շնորհավորանքը միայն բարոյական էր, իսկ հիմա նաև նյութական բովանդակություն ունի: Մարզիկը հիմա գիտի, որ բարձր տեղ գրավելն իր համար նաև գումար վաստակելու միջոց է: **- Մարզիկները հիշաբժան էր նաև նրանով, որ ստեղծեցիք Արցախի մարզիկների միություն՝ ԱՄՍ:** - Դա ռուսացյալ կիսապրոֆեսիոնալ սպորտի զարգացմանը, մարզիկների սոցիալական խնդիրների լուծմանը: Մեր մարզիկներից ոմանք բանակում ծառայությունն ավարտելուց հետո չեն շարունակում սպորտով զբաղվելը՝ հենց այդ պատճառով. ընտանիք կազմելով՝ չեն հասցնում հոգալ կարիքները: ԱՄՍ հիմնական գործառնություն դա պետք է լինի: **- 2018 թվականը նաև Ձեր անձնական հաջողության տարի էր. երեք դասիկներից հետո ունեցաք որդի...** - Իմ կարծիքով, արցախցու ընտանիքում պետք է առնվազն 4 երեխա լինի: Յուրաքանչյուր արցախցի պետք է նաև մտածի, որ երեխան միայն իրենը չէ, նաև՝ պետությանը: **- Ի՞նչ կմտա՞ք մարզիկներին, մարզասերներին և, ընդհանրապես, հանրությանը:** - Նոր տարում բոլորին մաղթում եմ նորամոր հաջողություններ, ամենակարևորը՝ առողջություն, մանավանդ որ մազիկի համար դա ամենակարևորն է, քանի որ վնասվածքի պատճառով նա չի կարող շարունակել սիրած գործը: Մարզիկներին ու մարզիչներին մաղթում եմ առանց վնասվածքի եզրափակել տարին ու նոր մրցանակներ բերել մեր երկրին: Թող 2019-ը միայն հաղթանակների տարի լինի ու, ամենակարևորը, լինի խաղաղություն:

Սվետլանա ԽԱՂԱՏՐՅԱՆ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԵՆՍԱԿԵՐՊ

Վերջերս «Լուսարար» թերթից (24.11.2018թ.) իմացա, որ Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարարությունը մոսկվաբնակ մի խումբ բարերարների նախաձեռնությամբ և աջակցությամբ հայտարարում է նոր նախագծի մեկնարկը:

Արցախում բնական գիտությունների զարգացման և համապատասխան մանկավարժների պատրաստման նպատակով սահմանվում են «Ինսիֆյանի», «Կոնսյանցի», «Մերգելյանի» անվան կրթաթոշակներ: Համապատասխանաբար «Ֆիզիկա», «Քիմիա», «Մաթեմատիկա» առարկաներից հավակնորդ կարող են դառնալ 2019թ. հանրապետական առարկայական օլիմպիադաներում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր զբաղեցրած ավագ և միջնակարգ դպրոցների 11-րդ դասարանների աշակերտները:

- 1-ին տեղ՝ ամսական 100 ԱՄՆ դոլար, 1 տարվա կտրվածքով,
- 2-րդ տեղ՝ ամսական 70 ԱՄՆ դոլար, 1 տարվա կտրվածքով,
- 3-րդ տեղ՝ ամսական 50 ԱՄՆ դոլար, 1 տարվա կտրվածքով:

Երանց համար, ովքեր ուսումը կշարունակեն մանկավարժական մասնագիտություններով, կսահմանվեն անհատական կրթաթոշակներ:

Այս անվանական կրթաթոշակները, անկասկած, կաջակցեն բնական գիտությունների զար-

գացմանը: Ենթադրյալ միջոցառումները լրացուցիչ կխթանեն այս հնավանդ երկիրը դարձնել հզոր ու հպարտ, տնտեսապես զարգացած և աշխարհում ճանաչված:

Թույլ տվեք իմ և Սարուշենի փունջն ընդգրկող դպրոցների ուսուցիչների անունից շնորհակալություն հայտնել վերը նշված կրթաթոշակները հովանավորող և կազմակերպող բարերարներին՝ նրանց կենսակերպի, բնավորության, մասի-սահայաց նպատակների և ազգապահպան գաղափարների համար: Այո, Արցախի արզանդը չի դադարել տաղանդներ ծնելուց: Պարզապես պարարտ հող է պետք ստեղծել, ինչի գիտակցումն արդեն գերակա է: Կարծում եմ՝ այս կրթաթոշակներն ավելի ամբողջական, կենսունակ ու բովանդակալից կլինեն, եթե խրախուսվեն, թեկուզ և միանվագ գումարով, նաև կրթաթոշակների հավակնորդների ուսուցիչները, ինչպես անում են սպորտում՝ խրախուսելով մարզիչներին, իսկ ուսուցիչն աշակերտի մտքի մարզիչն է: Ժամանակն է, որ հայ ժողովուրդը ծնի իր Լուսինյան մրցանակակիրներին: Հայ ճկուն մտքի այսօրվա, գուցե և վաղվա ճարտարապետները կստեղծեն այնպիսի գեներ, որի շնորհիվ մեր թշնամին հավիտյան կլռեցվի, և այս դեպքում ազգի ծովածուկի ժայռը, նրա երկնափառ հույսերը կօրհանանվեն: Հույս ու հավատով եմ, որ դպրոցի առարկայական ու լիարժեք բարեփոխում-

ներից հետո մեր երկիրը կդառնա կրթություն արտահանող երկիր, կրթությունը կդառնա արժեք ու բոլորիս մտահոգության առարկան: Այսօր թշնամու խոսքի տոնայնության իջեցումը կախված է մեր երկրի ու բանակի հզորացումից, զինվորի նկատմամբ մեր հոգատարությունից, մեր ավանդների նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Այսօր ողջ ազգն է ճշում, իսկ դա ողջ չէ, խնդրանք ու աղերսանք չէ, դա նախ և առաջ պահանջ է, պահանջ՝ միավորվելու, հրաշք գործելուն ընդունակ մեր ուղեղները երկրում պահելու և ապագա ուղեղները զարգացնելու համար: Մեր երկրի անկախությունը, մեր սահմանին կանգնած զինվորն անգնահատելի արժեք են, ինչպես այսօրվա դպրոցի նստարանին նստած աշակերտները, որոնք հոգատարության կարիք ունեն:

Այսօր դպրոցներում ունենք երեխաներ, հիմնականում՝ բազմազավակ ընտանիքներից, որոնք դեռևս նյութական օգնության և օժանդակության կարիք ունեն: Խորհրդային տարիներին այս հարցը լուծվում էր պարտուսի հիմնադրամի միջոցով: Հիմնադրամի, եթե այն այսօր, թող որ այլ հիմնադրամի անվամբ, դպրոց մտներ և լուծեր նյութական կարիքների մեջ գտնվող երեխաների խնդիրները: Այսօր մենք շատ ենք խոսում սրբություններին և այլ ազգային արժեքներին ավելի բարձր որակ տալու մասին, բայց խոսելը

դեռ բավական չէ, պետք է գործել: Գումար խնայել և այդ խնայողությունը հասցնել զագաթնակետին, խնայված գումարներն ուղղորդել դեպի նշված անգնահատելի արժեքների մարմնավորում:

Մեր ազգի թշնամին զարմանալիորեն կարողացել է մասնատել, իսկ այժմ գիտենք, որ մեր հաղթանակների սրբություն սրբոցը միասնությունն է: Մենք պետք է կարողանանք պետության շահը վեր դասել ընտանեկան շահից, ինչ-քան էլ տարօրինակ հնչի: Հենց դա է հրեաների և հայերի՝ ընտանիքի և պետության նկատմամբ ունեցած վերաբերմունքի տարբերությունը: Հրեան սկզբից մտածում է պետությունը հարստացնելու մասին, իսկ հետո պետությունն է հարստացնում ընտանիքին, բայց հայը սկզբում հարստացնում է իր ընտանիքը, նոր միայն մտածում պետությունը հարստացնելու մասին:

Համոզված եմ ու վստահ, որ մենք կդառնանք ինտելեկտուալ զարգացած տեխնոլոգիական երկիր: Դրա ապացույցը մարդկային հզոր միտքն է հենց այդ ոլորտում:

Շահեն ՄԱՐԳԱՐՅԱՆ
Սզնեցի միջն. դպրոցի
Ֆիզիկայի ուսուցիչ,
ԱՅ վաստակավոր մանկավարժ

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ

Լեզվի կոմիտեի հորդորակը՝ **շնորհակալ եմ, շնորհակալ լինել, շնորհակալություն հայտնել և շնորհակալություն** միավորների գործածության մասին:

Շնորհակալ եմ և **շնորհակալ լինել** բայական միավորները պահանջում են **ո՞ւմ, ինչի՞ն, ումի՞ց, ինչի՞ց** հարցերին պատասխանող լրացումներ: Այսինքն՝ մենք կարող ենք շնորհակալ լինել ինչպես **մեկին**, այնպես էլ՝ **մեկից**: Բերենք օրինակներ.

«**Շնորհակալ եմք ծնողներին (ո՞ւմ)**՝ զգոնության համար»:

«**Շնորհակալ եմ իմ բախտին (ինչի՞ն)**, որ այս ժամանակներում եմ լույս աշխարհ եկել»:

«**Անչափ շնորհակալ եմ Աստուծոց (ումի՞ց)**, որ ինձ անցկացրեց այդ փորձությունների միջով, երազելու հնարավորություն տվեց»:

«**Շարաթաթերթից (ինչի՞ց) շնորհակալ եմ**, որովհետև նրա հարցազրույցից հետո տունս վերանորոգեցին»:

«Հեռացա՝ **շնորհակալ լինելով** այն **կնոջը (ո՞ւմ)**, որն ասաց. «Հիշիր, մարմնական ցավն անցողիկ է, հոգեկանը՝ ընդմիշտ տանջող»:

«**Շնորհակալ եղանք** թատրոնի տոմսավաճառից (ումի՞ց)»:

«Դուք պետք է **շնորհակալ լինեք ճակատագրին (ինչի՞ն)**, որ Ձեզ պարգևել է այդպիսի արտաքին»:

«Հարկավոր էր **շնորհակալ լինել ճակատագրից (ինչի՞ց)**, այս բոլորը նա հասկանում էր»:

Վերջին տարիներին պաշտոնական խոսքում և զանգվածային տեղեկատվության միջոցներում **շնորհակալ եմ** և **շնորհակալ լինել** միավորների հետ կիրառվում են հիմնականում տրական հոլոկով լրացումներ (շնորհակալ եմ **թեզ**, զինվորի**ն**,

ոստիկանության**ը** և այլն): Ինչպես տեսանք, կարելի է նաև շնորհակալ լինել **թեզից**, զինվորի**ց**, ոստիկանությունի**ց**, քանի որ սովորական է բացառական հոլովի գործածությունը հոգեկան վիճակ, դրություն և համանման իմաստներ արտահայտող բայերի հետ (**վախենալ, ծանձրանալ, սարսափել, զգուշանալ** և այլն): Ուրեմն՝ ինչպես որ խռովում, սարսափում ենք **մեկից**, այնպես էլ գոհանում ենք **մեկից**, շնորհակալ լինում **մեկից**:

Այժմ անդրադառնանք **շնորհակալություն հայտնել և շնորհակալություն** միավորներին: Սրանք պահանջում են **ո՞ւմ, ինչի՞ն** հարցերին պատասխանող լրացումներ:

«Խորին **շնորհակալություն եմ հայտնում** իմ թեկնածուներին առաջադրած **կազմակերպություններին և ընկերներին (ո՞ւմ)**»:

«Հատուկ **շնորհակալություն ենք հայտնում խմբագրությանը (ինչի՞ն)**»:

«**Շնորհակալություն Ձեզ (ո՞ւմ)**, պարոն Գևորգ, շնորհակալություն»:

Բացառական հոլովով լրացումների կիրառությունը սխալ է (շնորհակալություն հայտնել բարերարից):

Այսպիսով՝ **շնորհակալ եմ** և **շնորհակալ լինել** բայերի հետ հավասարապես գործածել տրական և բացառական հոլովով լրացումներ (Շնորհակալ եմք ձեզ/ձեզին, որ հետևում էք մեր խորհուրդներին),

շնորհակալություն հայտնել և շնորհակալություն միավորների հետ գործածել միայն տրական հոլովով լրացումներ (Շնորհակալություն ենք հայտնում/շնորհակալություն ենք համագործակցության համար):

ՍՈՒՐԲ ԾՆՆՂՅԱՆ ՏՈՆԻ ԻՄ ԽՈՂԵՐԻՑ

Որպես սքանչելիք և լավագույն խորհուրդ՝ շնորհավորում եմ բոլորիս Սուրբ Ծնունդը, որը սովորեցնում է ապրել մեր հասանելի ազնվագույն կյանքը հոգու սնունդով: Այս օրերին Սուրբ Ծննդյան տոնը մի հիանալի առիթ է՝ նորից խոսելու մարդկային լավագույն որակների դաստիարակության մասին: Առավել ևս ուշադրության է արժանի այն երևույթը, որ յուրաքանչյուր յուրովի առանձին տեղ ենք տալիս մարդուն մաքրագործելու տանող հոգևոր արժեքներին, իսկ հոգևոր դաստիարակությունը մեր անցած ու անցնելիք ճանապարհի ուղեկիցն է: Սուրբ Ծնունդը արժեքների վերանգնահատում և վերաթմուրում է:

Խորհրդային տարիների ստրկացված կյանքը՝ արդբեջանական իշխանությունների «հովանու» ներքո, արցախցիներիս զրկել էր քրիստոնեական հավատքի և նրա հետ կապված բոլոր սովորույթների ու տոնական օրերի մասին բարձրաձայն արտահայտվելուց: Մարտակերտում եկեղեցի չկար, հին ավերակներ էին, Գանձասարում եկեղեցին չէր գործում, բայց առիթից առիթ գնում էինք ուխտագնացության: Հասկապես ուստարվա վերջին աշակերտներին տանում էինք՝ այնտեղ, վառվող մոմերի առկայությունների մեջ մեր մրմունջները փոխանցում Աստուծու լուռ ու երբեմն՝ ծածուկ: Բուհում սովորելու տարիներին էլ աթեիզմ էինք անցնում, որ ժխտում է ամբողջ քրիստոնեությունն ու Աստծո գոյությունը, իսկ մեր հարևանները մեր կեանքից «անհավատ» էին կանչում:

Արցախյան պատերազմը, կարելի է ասել, մեզ ազատեց նաև հոգևոր ստրկացումից, և յուրաքանչյուր արցախցի սկսեց գիտակցել, որ այդ հավատքը իր հոգու մեջ էր, բայց կապանքների մեջ լինելով՝ զրկված էր դրա մասին խոսելու իրավունքից: Վաղուց մենք ազատվել ենք այդ հոգևոր ստրկացումից և այսօր համայն հայության հետ կանգնած ենք Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան մեծ խորհրդի առջև:

Այն չքնաղ մի խորհուրդ է, որ մեզ սովորեցնում է բարություն, ազնվություն, մեծագույն մարդասիրություն, որի կարիքն ունի ամբողջ աշխարհը: Սուրբ Ծննդյան ոգեկոչումը խաղաղության և մարդկային լավագույն հարաբերությունների արտահայտություն է, քանի որ Քրիստոսի Սուրբ Ծննդով մարդիկ կոչված են համերաշխ ապրելու իբրև հարազատ եղբայրներ՝ իբրև երկնավոր Հոր Որդիներ: Սուրբ Ծննդյան ամեն մի ավետիս հոգու ավետիս է յուրաքանչյուր քրիստոնյայի համար, նրա ամեն մի ավետիս հզոր վահան է և հաղթության զենք չարիքի ու մեղքի դեմ:

Մարդկային հոգին չի կարող բավարարվել միայն նյութականով, նյութականից վեր հոգևոր սնունդ է պահանջվում, մարդկությունը երազում է արդարություն և խաղաղություն բերող Փրկչի գալստյանը: Եվ ՆՍ եկավ, եկավ որպես հոգևոր սնունդ, եկավ մեզ հոգու անդորրություն բերելու, եկավ, որ իր հույսով ու հավատով ապրենք: Ժամանակի հավերժության մեջ տարիներ, դարեր, հազարամյակներ են անցնում, մարդկային պատմության փոքր ու մեծ իրադարձությունները հաջորդում են միմյանց, ու այդ ամենի վրա, որպես սիրո, արդարության և խաղաղության հավերժական ճառագայթում, տիրաբար շողում է Քրիստոսի Սուրբ Ծննդյան լույսը՝ հոգևոր իմաստ ու բարոյական նպատակ հաղորդելով մարդու կյանքին: Հոմերի Պոպի այցը Հայաստան բնավ պատահաբար չհամարվեց ուխտագնացություն: Քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն, աշխարհում առաջինը ընդունելու իրողությունն այսօր յուրատիպ ուղերձ է աշխարհին, առավելապես՝ Նարեկացուն Տիեզերական եկեղեցու վարդապետ հռչակելու փաստը: Մենք բիբլիական ժողովուրդ ենք, իսկ Նարեկացին ոչ թե հայերիս, այլ մարդու և աշխարհի փրկության մարմաջով է շարադրել «Նարեկ»-ը: Հայերս մեր ողջ պատմության ընթացքում հավատացել ենք Հիսուսի պատգամներով աշխարհը վերափոխելու, մարդու հոգին ազնվացնելու գաղափարներին ու այդպես էլ շարունակենք հավատալ գալիք լավ օրերի՝ մեր բոլորիս երազանքների իրականացմանը: Արժեքների վերածննդի ու վերաթմուրման գիտակցմամբ մենք հաղթահարում ենք ինքներս մեզ, մեր թուլություններն ու սարկությունները:

Մարտակերտի Վլ. Բալայանի անվան հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցի հայրը
Լեզվի և գրականության ուսուցչուհի Նատաշա ՊՈՂՈՍՅԱՆԻ խոհերը վերցված են «Մանկավարժի օրագիր» նորահրատարակ գրքից, որի շնորհանդեսը տեղի է ունեցել վերջերս: Այդ մասին՝ հաջորդիվ:

«ԹՎՈՎ+ԹՎԱԿԱՆ» ԲԱՌԱԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ձանգվածային տեղեկատվության միջոցներով կարդում կամ լսում ենք.

«Կազմակերպվել է թվով երկու այլ գորակոչիկի տարկետում տալու գործընթացը»:

«Այս հարցը Ռուսաստանի և Հայաստանի ղեկավարների թվով երրորդ հանդիպման օրակարգում էր»:

«Անվավեր է ծանաչվել թվով հինգ քվեաթերթիկ»:

«Գնել են թվով 53 կոնյակ»:

Օրինակների այս շարքը կարելի է շարունակել, բայց կարծում ենք՝ հարկ չկա, որովհետև անհրաժեշտ հարցը հավանաբար արդեն ծնվեց. իսկ այստեղ ի՞նչն է սխալ, ինչպե՞ս պետք է լինի:

Խնդրում ենք ուշադրություն դարձնել հետևյալ բառակապակցություններին՝ **թվով երկու, թվով երրորդ, թվով հինգ, թվով 53**: Հիմա հարց տանք.

Իսկ ուրիշ ի՞նչ են երկու-ն, երրորդ-ը, հինգ-ն ու 53-ը, եթե ոչ թիվ: Արդյո՞ք իմաստ ունի թվականի հետ «թվով» բառածիփ գործածությունը: Հե՛տ ևս մեջ «թիվ» բառի իմաստն արդեն իսկ կա:

Սա այն դեպքերից է, երբ երկու բառից մեկն անհարկի է գործածվում, ուղղակի ավելորդ է: Լեզուն ավելորդություններ չի սիրում և ձգտում է սեղմության:

Առաջնորդվելով այս սկզբունքով՝

ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

Թվականների հետ «թվով» բառածիփ չգործածել և այսուհետև ասել (գրել), օրինակ, ոչ թե **թվով երկրորդ**, այլ **երկրորդ**, ոչ թե **թվով երեք**, այլ պարզապես **երեք** և այլն:

Լեզվի կոմիտե

ԴԻՄԱՆԿԱՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺ-ՀՈԳԵԲԱՆԻ ԼՈՒՍԵ ԿԵՐՊԱՐ



Կայացման բացակայությամբ, մինչդեռ այն հընթացս աճում է դպրոցական կրթական համակարգում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումներին զուգընթաց: 2017թ. հուլիսին Հայաստանի բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից նրան շնորհվել է դոցենտի կոչում:

Ուղղակի անհնար էր առանց դասապատրաստման ներկայացնել նրա գործնական պարապմունքներին, որովհետև պահանջկոտ էր մինչև լարվածության հասցնելու աստիճան. «Պատրաստվելու համար ես ձեզ կտան ևս հինգ րոպե, և տալը րոպե, բայց բոլորդ պետք է պատմեք...»: Ու այսպես մենք սովորեցինք նաև լսարանում դաս սովորել, միայն սովորել: Հայտնի հոգեբան Ալֆրեդ Ալլերի սոցիալական պատասխանատվության հոգեբանական երևույթի արժևորումը սոսկ տեսական նյութով չէ, որ մատուցում էր ուսանողներին, այլև սեփական պահվածքով ու կենսակերպով: Պատասխանատվության մասին, ուշանալու, դասը չպատրաստելու համար նա ուներ հոգեբանական բոլոր մեծ ու փոքր բացատրությունները, որից հետո անհնար էր դառնում այլևս ուշանալը, պատասխանատվությունից հեռու մնալը կամ անփութություն անելը: Եվս մեկ կարևոր հատկանիշ, որը գտել եմ Եվգենյա Սարգսյանի, մեր շատ սիրելի Եվգենյա Ակոպովնայի շնորհիվ՝ աշխատասիրություն:

Այսօր նա 70 տարեկան է: Այս թվի մեջ ամբողջացված է մի գեղեցիկ կենսագրություն, որում կա և՛ լուսառատ ջերմություն, և՛ մեծ սեր, և՛ մեծ կորուստ, և՛ ազնիվ նվիրում: Եվգենյա Սարգսյանի միևնույն օրը՝ Դավիթը, զոհվել է Արցախյան պատերազմում: Ու այսպիսի մեծ վշտի տակ կբաժնուրան հաջողվում է մնալ այդքան բարեստե, եռանդուն ու լավատես:

Ցայսօր մենք Ե. Սարգսյանի հետ ենք, որովհետև դասախոս-ուսանող հարաբերություններն այլևս քաղցր անցյալում են, հիմա ընկերական, ինչպես ինքն է ասում, հորիզոնական հարաբերություններ են: Իրականում ուղղահայաց հարաբերություններ չկային նաև ուսանող-դասախոս շփումների ժամանակ, որովհետև նա այն եզակիներից է, ով ջերմորեն տան դռները բացեց ուսանողներին առաջ, և մենք պեղեցինք ու գտանք նաև մայրական քնքշանք ու հոգատարություն: Սրանք հարաբերություններ են, որով սերտեցինք կյանքի դասեր, և որ ամենակարևորն է, սովորեցինք նվիրվել, վստահել ու սիրել, ուրախանալ ամենափոքր առարկաներով կամ երևույթներով, լինել պատասխանատու, որը երևի թե նրա կյանքի կարգախոսն է ու շարժիչ ուժը, նրա հիմնական գեները, նրա անխոցելիությունը:

Սիրելի՛ Եվգենյա Հակոբի, շնորհավոր Ձեր հոբելյանը: Շարունակեք սեփական կյանքի շարունակությունը դիտել ստեղծագործելու, դասավանդելու և տալու մեջ, շարունակեք մնալ այն կերպարի մեջ, որ ստեղծել էք 70 տարիների ընթացքում: Շնորհակալություն Ձեզ՝ մեզ և սերունդներին տված ջերմության համար:

Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆ
Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Կան մարդիկ, որ իրենց կերպարային ազդեցությամբ երկար տարիներ մնում են սերունդների հիշողության մեջ: Մնում են ջերմության ու սիրո հուշերով: Սերունդները զննում են, իսկ նրանք՝ նրանց հետ համաբայլ: Սերունդները նվաճում են մասնագիտական աշխարհը՝ ժամանակ առ ժամանակ կանգ առնելով նրանց խորհուրդների, տված գիտելիքների ու հմտությունների վրա: Նրանք շատ ամուր են նստած սերունդների հիշողության պահոցում, և իրենց տեղը հենց այնպես չեն ստեղծել. անդուլ ու անխոնջ աշխատանքի, նվիրումի ու մանկավարժական խորը ռոմանտիկայի շնորհիվ: Ու այդպես նրանք դարձել են փոքրիկ ուղեցույց:

Իմ ուսանողական տարիների ամենավառ հուշերը հիրավի կապված են Արցախի պետական համալսարանի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ Եվգենյա Սարգսյանի կերպարի հետ:

Ծնվել է 1948 թվականի մարտի 10-ին Մարտակերտի շրջանի Ներքին Հռոմաթաղ գյուղում: Ավարտել է Բաքվի հ. 236 միջնակարգ դպրոցը, 1967 թվականին՝ մանկավարժական տեխնիկումը, ապա ուղեգրով սկսել է աշխատել Միր Բաշիրի շրջանի ութամյա դպրոցում՝ որպես դասավար: 1970թ. տեղափոխվել է Ստեփանակերտ, որտեղ աշխատանքի է անցել հ. 1 դպրոցում: 1974թ. աշխատանքի է ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում՝ որպես մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ավագ լաբորանտ, ապա՝ մանկավարժության և հոգեբանության կաբինետի վարիչ: 1978 թվականին ընդունվել է 1983-ին ավարտել է Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկայի ֆակուլտետը: 1986 թվականից ցայսօր դասախոսում է Ստեփանակերտի մայր բուհի մանկավարժության և հոգեբանության ամբիոնում: Ձբաղվել է ընտանեկան փոխհարաբերությունների և անչափահասների շեղվող վարքի հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման հարցերով: Շուրջ երկու տասնյակ գիտական ու գիտամեթոդական հրատարակումների հեղինակ է: Վերջերս լույս է տեսել «Հոգեբանական ծառայությունը դպրոցում» նրա մենագրությունը, որը պահանջված է ոչ միայն դպրոցական հոգեբանական ծառայության խնդիրների, ուղիների ու մեթոդների հստակեցման ուսումնասիրության ոչ բավարար աստիճանով, այլև հայրենական հոգեբանական գրականության մեջ այս հարցի ամբողջական ներ-

ԱՆՄՆԱՅՈՐԴ ՆՎԻՐՈՒՄՈՎ



Կրթությունը հասարակության կայացման այն սուրբ զարկերակն է, որին հարկավոր են նվիրյալներ, որոնք իրենց բոլորանվեր ուժերով նպաստում են մատաղ սերնդի կրթության վեհ գործին:

Սա թերևս հասարակության կայացման ամենակարևոր ոլորտներից է, որով պայմանավորված են սերնդի հաջորդականության նախադրյալների կայացումը, զարգացումն ու բարգավաճումը:

Այսպիսի նվիրյալներից է Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի մարմնամարզության ակնառու ուսուցիչ Գենարի Դանիելյանը, որն իր բոլորանվեր ուժերը ներդնում է դպրոցի ոչ միայն ֆիզկուլտուրա առարկայի դասավանդմանը, այլև բոլոր մյուս աշխատանքների հասարակական դերի էլ ավելի բարձրացմանը:

Գ.Դանիելյանը ծնվել է 1983թ. Ստեփանակերտ քաղաքում՝ ծառայողի ընտանիքում: 1992թ. մայիսի 9-ին Շուշիի ազատագրումից ի վեր ընտանիքով ապրում են հարազատ քաղաքում, քանզի, լինելով բնիկ շուշեցիներ, վերադարձել են հարազատ բնօրրան:

Ավարտելով Խ. Աբովյանի անվան կրթօջախը՝ Գ. Դանիելյանը 2001թ. ընդունվում է ԱրՊՀ «Ֆիզկուլտուրա և ռազմագիտություն» բաժինը ու սովորում մինչև 2003 թվականը, որից հետո զորակոչվում է երկու տարի բարեխղճորեն ծառայում է ԼՂՀ պաշտպանության բանակի նախ՝ Իվանյանի, ապա՝ Մարտակերտի զորամասերում: Ձորացրվելուց հետո համալսարանում շարունակել է ուսումը՝ նաև 2004-ից աշխատանքի անցնելով հարազատ կրթօջախում:

Շուտով կլրանա Գ. Դանիելյանի մանկավարժական գործնության 15 տարին, որի ընթացքում ի հայտ են եկել հմուտ մանկավարժի աշխատանքային որակները՝ բարեխղճություն, հետևողականություն, պահանջկոտություն, կարգապահության ապահովում, բոլոր հարցերին լուծում տալու պատասխանատվություն ու սրտացավություն: Այս որակների շնորհիվ նա պահանջված ու սիրված ուսուցիչ է: Աշակերտները համախմբվում են նրա շուրջը, ստանում հրահանգներ ու սիրով կատարում:

Նա բարձր դասարանցիների համար խորհրդատու եղբայր է, խստահայաց ավագ և, անշուշտ, սիրելի ուսուցիչ: Իսկ դեռահասներն ու պատանի-երիտասարդներն այդպիսի ուսուցչի կարիք շատ ունեն, վստահում են նրան, նրա ներկայությամբ իրենց լավ են զգում, նաև՝ հասկացված ու պահանջված, քանզի Գ. Դանիելյանը մանկավարժ է բառիս բուն իմաստով:

Միաժամանակ աշխատելով Շուշիի մանկապատանեկան մարզադպրոցում՝ որպես հանդուր մարզախաղի մարզիչ, նրան հաջողվում է իր մարզիկներին հասցնել ԱՀ և ՀՀ մրցանակային տեղերի: Ունեցել է շատ մարզիկներ, որոնք մասնակցել են մրցաշարերի Հայաստանում, Ֆրանսիայում, Ռուսաստանում:

Առայսօր Գ. Դանիելյանի թիմի աշակերտները մասնակցում են հայաստանյան առաջնություններին՝ զբաղեցնելով պատվավոր տեղեր:

Նվաճումներ ունի տարբեր մարզածներից՝ թեև արևելակա, բասկետբոլ, ֆուտբոլ:

Նրա հետևողական ջանքերի շնորհիվ ԼՂՀ Ազգային ժողովի փոխանցիկ գավաթն իր մշտական տեղն է գտել Շուշիի Խ. Աբովյանի ան-

վան դպրոցում, քանի որ չորս տարի անընդմեջ կրթօջախը զբաղեցրել է առաջին տեղ թեթև արևելակայից:

ՀՀ ԱԺ գավաթը դարձյալ Գ. Դանիելյանի շնորհիվ երկու տարի մնացել էր ԱՀ ԿԳՍ նախարարությունում:

Գ. Դանիելյանը առողջ ապրելակերպի ջատագով է և լավագույն կազմակերպիչ: Այդ են վկայում նրա բազմաթիվ հետաքրքրաշարժ, խրախուսիչ միջոցառումները, որոնք հետք են թողնում աշակերտների հիշողության մեջ: Մի ամբողջ թղթապանակ զարդարում են նրան ընծայված պատվոգրերը, շնորհակալագրերը, պարգևատրումները, այդ թվում՝ Ֆիզկուլտուրայի օրվա կապակցությամբ, Մայիսյան եռատոնին նվիրված բիլիարդի առաջնությունում առաջին տեղ գրավելու, ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության մրցանակային տեղի, մատաղ սերնդի դաստիարակության գործում ունեցած ավանդի և ԼՂՀ ԱԺ գավաթի խաղարկության հանրապետական մրցումներում դպրոցի թիմի առաջին տեղը գրավելու համար Արցախում հանդուր մարզածիկ զարգացմանն ու մասնակցությանը նպաստելու համար:

Շնորհիվ այս ամենի և շատ այլ մարզածների՝ ԱՀ ԱԺ նախագահ Ա. Դուլյանի կողմից Գ. Դանիելյանը պարգևատրվել է՝ դարձյալ արժանանալով պատվոգրի և դրամական պարգևի, ԿԳՍ կողմից՝ նույնպես:

2011թ. նա արժանացել է ԱՀ վարչապետի մեդալի: Որպես մարզիկ և սպորտի մասնագետ՝ նախընտրում է, որ իր ընտանիքը ևս զբաղվի սպորտով, որի նպատակով էլ ընտանիքով բազմիցս մասնակցել է «Լավագույն մարզական ընտանիք» մարզախաղերին՝ արժանանալով մրցանակային տեղերի:

Այս տարի առաջին տեղ զբաղեցնելու համար մասնակցել է Ծաղկածորում կայացած «Լավագույն մարզական ընտանիք» հայաստանյան առաջնությանը, որտեղից վերադառնալով՝ մասնակցել է «Ընտանեկան ճամբար» մրցույթին Պատարա գյուղում՝ դարձյալ զբաղեցնելով առաջին տեղը: Նրան շնորհվել է հավաստագիր, և ընտանիքով վաստակել են տասնօրյա սևծովյան հանգստի ուղեգիր Գելենջիկում:

Գ. Դանիելյանը ընտանեկան անձ է, չորս դուստրերի հայր: Կինը՝ Անուշը, նրա ջերմ երկրպագուն է՝ միշտ ամուսնու հաջողություններով ուրախացող: Նա էլ է մարզասեր, չնայած ավարտել է ԱրՊՀ Քիմիա-կենսաբանություն բաժինը: Նաև հոգատար մայր է, լավագույն տնային տնտեսուհի:

Ամուսիններով ստեղծել են ընտանեկան ջերմ մթնոլորտ, ուր ոտք դնողը խոր հանգստություն է զգում, նույնիսկ երանություն... Եվ սա՛ շնորհիվ ընտանեկան ներդաշնակության, կազմակերպվածության:

Գ. Դանիելյանը մեծ ընտանիքի անդրանիկ գավակն է, սիրված և ողջախոս որդի: Հայրը՝ Արթուր Դանիելյանը, նախկին ազատամարտիկ, բնիկ շուշեցի է, որի դաստիարակությամբ չորս արժանի որդի է մեծացել Շուշիում և իրենց ավանդն են բերում բերդաքաղաքի բարգավաճմանը: Հյուրընկալ մայրը՝ Անահիտը, իր շուրջն է համախմբում որդիներին ու ստեղծում ընտանեկան ջերմ մթնոլորտ: Շուշին հպարտ է, որ ունի այսպիսի արժանավոր ընտանիքի գավակ:

Գ. Դանիելյանը բնատուր օժտվածությամբ մանկավարժ է՝ լի եռանդով, նվիրվածությամբ, հասարակական ակտիվությամբ: 35-ամյա երիտասարդ մանկավարժին ու դաստիարակին մաղթենք նորամուր նվաճումներ և հաղթանակներ՝ ի բարօրություն հարազատ քաղաքի և հաղթանակած Արցախի:

Վարդիթեր ՀԱԿՈՒՅԱՆ

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴ

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀՈԳՈՒՄ ՍՐԲԱԶՆԱՑԱՑ...



Դեկտեմբերի 13-ին Ասկերանի շրջանի Ակնաղբյուր համայնքում նշվեց Արցախյան գոյամարտի նվիրյալ, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ Վարդան Ջիվանշիրյանի ծննդյան 55-ամյակը: Գյուղի ամենատարբեր վայրում՝ Արցախյան պատերազմում զոհված քաջորդիների հիշատակն անմահացնող հուշահամալիրում մեկտեղվել էին գյուղի հասարակությունը, ազատամարտիկներ, զինվորականներ: Այնտեղ էին Արցախի հերոսներ Արշավիր Ղարամյանն ու Վիտալի Բալասանյանը: Խորին վիշտային մեծից փոքր ծաղիկներ խոնարհեցին նահատակների հիշատակին...

Գյուղի միջնակարգը կրում է քաջորդու անունը: Հուշ-ցերեկույթը կազմակերպվել էր դպրոցի և ՊԲ զորամասի համատեղ ուժերով:

Միջոցառումն սկսվեց Տերունական աղոթքով: Ներկաների մեկ թուփ լռությամբ նահատակների հիշատակի խնկարկում էր: Կրթօջախի պատմության ուսուցիչ, փոխտնօրեն Արթուր Ավանեսյանին է տրվում քաջորդու կյանքն ու մարտական ուղին ներկայացնելու պատիվը:

Հուշապատմումը շարունակում են մանկության ընկեր Աշոտ Սարգսյանն ու մարտընկեր Արթուր Սարգսյանը՝ առավել զուներդ ու ամբողջական դարձնելով հերոսի դիմանկարը: Իսկ թույրը՝ մանկավարժ Բելան, որի խոսքում այնքան տխրություն կար, որ հայրական օջախի այրական շարունակությունը ընդհատվել է (Վարդանը չհասցրեց արու գա-

վակ ունենալ), մխիթարվում է նրանով, որ դպրոցը եղբոր անունով կոչվելով՝ նա հավերժացել է: Ամեն անգամ հպարտության մեծ զգացում է ապրում, երբ եղբոր այրու՝ պատմության լավագույն մասնագետ Սեդա Թորոսյանի շնորհիվ Ակնաղբյուրի աշակերտների՝ Արցախյան և Հայաստանում անցկացված օլիմպիադաներում առաջին տեղ գրավելու կապակցությամբ տարիներ շարունակ բարձր ամբիոններից հնչում է «Ակնաղբյուրի Վարդան Ջիվանշիրյանի անվան միջնակարգ դպրոց» արտահայտությունը: Վարդանի հետմորդները նրա հաղթանակները շարունակում են ուսման մեջ, գիտության ասպարեզում. սա է հենց հիշատակի հավերժացման ամենալավ օրինակը:

Կամ մի՞թե պակաս հավերժացում է, երբ շարքային Հարություն Բալույանն ասում է, որ Վարդան Ջիվանշիրյանը որպես հավերժ զինվոր մշտապես գրանցված է իրենց վաշտի անձնակազմի ցուցակում, և իրենք հպարտ են, որ ծառայում են այդ վաշտում ու հավատացնում են, որ կշարունակեն սրբազան գործը, որը սկսվել են քաջ Վարդանը, Ավոն, Վազգենը, ասրիլյան հերոսամարտերի քաջարի զինվորները:

Բարենաղթանքի և օրինանքի խոսքով հանդես եկավ գնդերեց Արտաշես սարկավազը:

Ելույթներն ընդմիջվում էին «Ասպետ» համույթի մենակատարների երգերով: Հպարտության զգացումն էր իշխողը, բայց և անհնար է առանց հուզմունքի լսել տղաների կատարմամբ «Կամավորի երգը».

Չի երազում ոչ աթոռ, ոչ ոսկի, ոչ գանձ, Հայրենիքն է իր հոգում սրբազնացած, Կռիվներ է նա մղում բոցերում անջեջ, Մխրանքները չի պատմում, պահում է իր մեջ...

Հայրենասիրական կատարումներով ապա հանդես եկան դպրոցի սաները: Սերունդների հերոսական հերթափոխը շարունակվում է...

Կան ժողովուրդներ, որոնք ծնվում են որպես առաքյալներ, և նրանց գոյության նպատակը կենսապահովման խնդրի լուծումը չի երբեք: Հայի, արցախցու տեսակն առաքյալի տեսակն է եղել ի սկզբանե. մի ձեռքին սուր էր՝ իր ֆիզիկական շինվածքը պահպանելու, մյուս ձեռքին՝ զիրքը՝ հոգու լույսն ու հավատը անեղծ պահելու նեցուկը: Արարումն էր հային տրված ասպարեզը կերպը, ու հողն էր նրա ապավենը:

Հոլովվել են դարեր, գլորվել պատմաշրջաններ, քաղաքակրթություններ են ավերվել ու վերստեղծվել, և այդ հոլովությունն հայի ընկալումներում ոչինչ չի փոխվել: Հայկից մինչև այսօրվա սահմանապահ դավանումն է մի հավատամք. «Կյանքից քանակ ազատությունն է»:

Այս համոզումը մեր կենսագործունեության, մեր ապրումի, մեր արարումի հիմքն է դարձել և ուղղորդել մեզ բոլոր ժամանակներում: Այդ գաղափարը մեր վահանն էր, որով դիմադրում էինք ժամանակի բոլոր տարածապաշտներին ու ավարառուներին:

Հային տարեկից շատ ժողովուրդներ են եղել՝ ասորի, բաբելացի, խեթ ու խուռի, որոնք ունեին մեծածավալ կայսրություններ, զիր ու մշակույթ, ստեղծել էին քաղաքակրթություն, բայց պատմության հարթակից նրանք իջան, քանզի հողը սոսկ տարածք էին դիտում, չունեին հողաճանաչ ու ինքնաճանաչ մարտիկներ, որոնք նախնայաց ոգով արիացած էին և նախնայաց գերեզմաններն իբրև սրբատեղի էին պաշտում: Մարտիկներ, որոնք համար իրենց ոտքի տակ եղած մի բուռ հողն իրենց



պապի քրտինքի ու արյան գուլձն էր՝ փրկագնված կյանքով: Փրկվածը արժանապատվությունն էր, որ երկնել էր հայկյան աղեղը, որ էլ էր Տիգրան Մեծի եղեգան փողից ու դարերի հետ դարերի մեջ անթեղվել, մեկ հառնել ու նորից ժայթքել սարդարապատյան կարմիր հրաբխից և վահագնացել արցախյան կրակե խառնարանում: Ավարայրից մինչև Արցախ,

Վարդան Մամիկոնյանից մինչև Վարդան Ջիվանշիրյան. այսպես նրանցով կնքվեց հայոց Անկախության պատվոգիրը: Վարդանի պատերազմը պատերազմ էր պատերազմի դեմ, կյանքի հաստատումն էր հանուն կյանքի: Վարդան Գեորգիի Ջիվանշիրյան: 55 տարի առաջ դեկտեմբերի 13-ին ժողով Ջիվանշիրյանի օջախը բերկրանք էր ապրում: Տիկին Ջուլիետան երկու դստեր՝ ժամնայից ու Բելայից հետո օջախին էր պարզել միակ արու գավակին, որին հայրը կնքեց Հայրենական մեծ պատերազմում զոհված հոր՝ Վարդանի անվամբ: 1981թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը: 1982-84թթ. ծառայել է խորհր-



դային բանակի շարքերում: 1986-ին, ստանալով ֆիզկուլտուրայի ուսուցչի որակավորում, աշխատանքի է անցել հարազատ գյուղի դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ, ապա՝ զինղեկ: Նա քաջ գիտակցում էր յուր մասնագիտության կարևորությունը: Պատասխանատու էր ու պահանջկոտ:

Արցախյան շարժման առաջին իսկ օրից կամավորագրվել է մեր պայքարին: 1988թ. Ասկերանում տխրահռչակ Կոնովալովին մերժող ցուցարարների շարքում էր, իսկ Ստեփանակերտի ցույցի մասնակիցներին նա նվիրաբերեց իր ողջ ամսվա աշխատավարձը՝ սննդամթերքի տեսքով:

Արցախյան գոյապայքարի հերոսական տարեգրության մեջ ոսկե տառերով իր անունն է գրել մեր հարազատ Ակնաղբյուրը: Նախքան Պաշտպանության բանակի կազմավորումն Արցախի գոյատևման գործում վճռորոշ է եղել եզակի, հատուկներու ձևավորված կամավորական ջոկատների դերը: Դրանցից մեկն էլ Ակնաղբյուր ջոկատն էր, որի հիմնա-

դիրն էր Արշավիր Ղարամյանը: Վարդանը սկզբում որպես դասակի հրամանատար, իսկ 1993-ի դեկտեմբերից՝ վաշտի հրամանատար, մասնակցել է բազմաթիվ մարտերի՝ Շուշի-Լաչին մարտական գործողություններից մինչև Կիլան, Չլդրան, Մուսուլմանլար, Արփազադուկ, Շուշան, Ասկերան-Աղդամ, Սեծ Շեն, Ունուբլու, Կուսապատ, Ջանյաթաղ:

1994թ. ապրիլի 13-ի Ջավազերիի մարտը, երբ զինադադարին մնացել էր ընդամենը մեկ ամիս, ընդհատեց նվիրյալի 33-րդ գարունը...

Դու ուսուցիչ էիր, քո զենքը գրիչն էր, քո վահանը՝ մատյանը, քո գորանոցը՝ մարգարայի խոսքը:

Դու ուսուցիչ էիր, ու քո վաշտի զինվորներն աշակերտներն էին:

Դու ուսուցիչ էիր, ու քո մարտական առաջադրանքը աշակերտական առողջ ֆիզիկական կրթությունն ապահովելն էր...

Դու ուսուցիչ էիր, մինչև կյանքը դադարեց կյանքով տրոփվելուց ու դարձավ Գոյապայքար:

Դու դարձար մարտիկ, քո զենքը ինքնաձիգն էր, քո վահանը՝ զրահաբաճկոնը, քո գորանոցը՝ բետոնապատ բերդը:

Դու դարձար մարտիկ, և քո վաշտի տղաները ակնաղբյուրցիներն էին՝ բոլորը պատվախնդիր:

Դու դարձար մարտիկ, ու քո մարտական առաջադրանքը բարձունքը չզիջելն էր...

Դու՝ մարտիկ ուսուցիչ, բարձունքը պահեցիր, բարձունքով այսօր պաշտպանված են քո սաները՝ առողջ ֆիզիկական կրթությամբ ու բարձունքները չզիջելու անբեկ կամքով...

Հայի անցած ճանապարհն այս առումով դաս է նաև ողջ մարդկությանը և հավաստում, որ վարդանների երթն անկասելի է: Մեր հավատամքը մեկն է. մարդկության ամոթի՝ 1915-ի ապրիլի դեմ մենք ելնում ենք մարդկայնորեն վեհ հայի հպարտությամբ՝ 2016-ի ապրիլյան հաղթությամբ: Մի՞թե սա չէր երթի ելած վարդանների դավանանքը: Տեր ենք մեր ստեղծածին, մեր երկրին, մեր արժեքներին. կհատվի ամեն մի պիղծ լեզու, որ կհանդգնի ստվերել մեր արժեքները, ամեն մի պիղծ ձեռք, որ կմեկնվի դեպի մեր հող:

Փառք բոլոր այն նվիրյալներին, ովքեր իրենց կյանքը զոհաբերեցին այդ մեծ երթի ճանապարհին, փառք բոլոր նրանց, ովքեր այդ երթի այսօրվա ջահակիրներն են: Ավարայրից մինչև Արցախ, Արցախից՝ հավերժություն. ահա հայոց պատգամն ու դասը հերթափոխի ելնող սերունդներին: Բարի՛ երթ, ու թող միշտ լուսափյուն լինի Հայոց ճանապարհը...

Արթուր ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի Վարդան Ջիվանշիրյանի անվան միջնակարգ դպրոցի կազմակերպչական գծով փոխտնօրեն, պատմության ուսուցիչ

«ՊԻՏԻ ԳԼԱՆԲ ՎԱՂ ԹԵ ՈՒՇ»

Ինտելեկտուալ խաղ



Համազգային հայ կրթական և մշակութային միության Արցախի գրասենյակի նախաձեռնությամբ և ՀՀԳ Արցախի երիտասարդական միության համագործակցությամբ դեկտեմբերի 21-ին Մարտակետի շրջանի Վաղուհասի միջնակարգ դպրոցում կայացավ «Պիտի գլանք վաղ թե ուշ» խորագրով ինտելեկտուալ խաղ-մրցույթ, որը նվիրված էր Հայաստանի Առաջին Հանրապետ-

ության 100-ամյակին: 100-ամյակի միջոցառումները դպրոցում սկսվել են անցած ուստարվա գարնանը, ու հենց մայիսի 28-ին դպրոցի տնօրեն Ա. Գրիգորյանի անձնակազմի հովանավորությամբ օլիմպիադաներում մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտների և նրանց դասավանդող ուսուցիչների համար էքսկուրսիա կազմակերպեց դեպի Գառնիի հեթանոսական տաճար: Այնտեղ խմբին ևս մեկ անակնկալ էր սպասվում՝ այց երևանի կենդանաբանական այգի:

Դեկտեմբերին տրվեց 100-ամյակին նվիրված միջոցառումների վերջին ակորդը: Միջոցառումը բացեց Համազգայինի Արցախի գրասենյակի պատասխանատու Հերմինե Ավագյանը, որը ներկայացրեց խաղ-մրցույթի նպատակն ու կարևորությունը: Սրա ելույթում այն էր, որ նախօրոք պատրաստված հատուկ քարտեզի միջոցով, որում նշված էին Արևմտյան Հայաստանի հայտնի քաղաքները, թիմերը, ճիշտ պատասխանելով հարցերին, փոքրիկ դրոշմների օգնությամբ քաղաքից քաղաք էին անցնում՝ «ազատագրելով» կորուսյալ քաղաքները: Հաղթող կիսմարվել այն թիմը, որի դրոշմն առաջինը կհասներ Արարատի գագաթ:

Թե՛ս պայքար էր ծավալվել խաղին մասնակից «Սասնա ծռեր», «Ուրտեխե», «Արցախ», «Նեմեսիս» և «Վահագնի աջով»

թիմերի միջև: Խաղի արդյունքում հաղթող ճանաչվեց «Սասնա ծռեր» թիմը, իսկ երկրորդ տեղը կիսեցին «Վահագնի աջով» և «Նեմեսիս» թիմերը: Հաճելի էր նաև այն, որ խաղը վարում էր դպրոցի նախկին սան, Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի ավագ գիտաշխատող Գոհար Աբրահամյանը:

Ամանորի կապակցությամբ անակնկալ նվերներ ստացան նաև 1-ին դասարանի 14 փոքրիկները:

Դպրոցի տնօրեն Ա. Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց Համազգայինին և ԱԵՄ-ին՝ հետաքրքիր նախաձեռնության համար: Միջոցառումը շարունակվեց գյուղի մշակույթի տանը, որտեղ ժողովրդական ու ազգային-հայրենասիրական երգերով հանդես եկավ «Մենք ենք, մեր սարերը» երգի-պարի պետական համույթը:

Միջոցառումներին աջակցել է ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը: Եզրափակիչ խոսքով հանդես եկավ ԱԵՄ-ի պատասխանատու Բենո Միրոյանը, որը նշեց, որ Արցախի գյուղական համայնքներում մնան միջոցառումներ կազմակերպելով՝ նպատակ են ունեցել աշխուժացնել մշակութային և կրթական կյանքը:

ԳՐԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԹԱԿԱՆ

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՎԱՐՊԵՏ ԲԱՆԱՍՏԵՐՈՇ

Սեր բարբառի գուռից ջուր է խմել Աստված:
(Ռ. Ե.)



Րուժանի անվան դպիտակարանի, Ավ. Իսահակյանի անվան մրցանակ կրող, Ռոբերտ Եսայանի առաջին գրքերից են՝ «Չենակետեր» (Եր., 1989թ.), «Ծարաված հետքեր» (Ստ., 1991թ.), «Տարածություն և հոգի» (Ստ., 1992թ.), «Նժար» (Ստ., 1995թ.), «Քառու և լույս» (Եր., 1997թ.) ևն: Սկզբից եթե 90-ականների դառնաշունչ տարիներին ուշադրություն էր գրավում նրա գեղագիտական խոսքի ձևը: Տողերիս հեղինակը հանդես եկավ «Եղիցի լույս»-ում՝ «Նժարվող մար» խոսքով, XII. 1995թ., 50-ամյակի կապակցությամբ Ա. Իսահակյանը հանդես եկավ գրքով ևն: 2008թ. Ռ. Եսայանը 33 մշակույթի նախարարության կողմից պարգևատրվել է ոսկե մեդալով: Այժմ 60-ամյակի կապակցությամբ հատորներով հրատարակվում են նրա գործերը: Ահա 2018թ. հրատարակված բանաստեղծությունների V հատորը, «Թատերադրվեստի երախտավորը» VII հատորը ևն (վերջինս նվիրված է ռեժիսոր Լեոնիդ Գրիբուլոյանի ծննդյան 70-ամյակին և ընդգրկում է թատերական արվեստին նվիրված ուշագրավ հարցազրույցներ, խոհեր, գիտական հետաքրքրություններով մտորումներ):

Մեծ մտածող Սերո Խանգադյանը հստակ շեշտել է. «Ինքնապաշտպանության ոգին է արթնացնում Եսայանը՝ Զորիզունը վահան, որ նախնին է թողել իբրև ժառանգություն... Եսայանը մեր տառապանքին տեղյակ է լիովին: Աշխարհը նորից անտարբեր է հայի, հայի Դարաբառի ցավին՝ Ու խավարի սալին իբրև մատաղացու: // Անտեր այս աշխարհի միրհող խիղճն է մորթվում... Այո, մորթվում: 1915-ին թուրք մարդակերները հավաքեցին հայ գրողներին և մորթեցին: Իսկ հիմա, այդ եղեռնը չմոռացած, Արցախի մեր տեսիլ գրող բանաստեղծները, զենքը ձեռքներին, քաջաբար կռվում են թուրք-աղբյուրներից մույս ցեղասպանների դեմ: Կռվում են հավատով, կհաղթեն» (Սերո Խանգադյան, 30.06.1993թ.):

Ռ. Եսայանի նոր բանաստեղծություններն ընդգրկված են «Ինքնուրույն դրամեր» V հատորում, որն ունի «Ոգեհայտնության ժամը», «Ես իմ երազն եմ», «Ոգուս ծաղիկն է դա», «Չրեշտակը և ես», «Մինչև... վաղը, մինչև... հանգրվան» բաժինները (գիրքը համեմատված է Սամվել Գաբրիելյանի խոսուսու ու վերացական նկարագրողություններով և հեղինակային լուսանկարներով): Ռ. Եսայանը մի ծավալուն բանաստեղծության (ն. տ., էջ 16-18) վերնագրով բնութագրել է իր ոգեղեն աշխարհի հյուսվածքը՝ «Ես միտքն եմ լույսի, տարածության հոգին»: Իրոք, աներկբա է բանաստեղծի հավատամքը՝ Սկիզբը // իմ բառն է, իմ խաղի ոգին... // Արշալույսահան երազ է բառս: // Բառերի միջև մերթ Ես եմ կանգնում: // մերթ՝ իմ ստվերը: // Եվ ճյուղն իր բողբոջով համբուրում է// երկինքը սիրո... // Իսկ դարի վարքը ինքնասպան է լինում: // ընդերքում բառի... // բառերն արտուն են բառաբանների// լաբիրինթոսում... // Ես միտքն եմ լույսի// տարածության հոգին... // Իմ ներշնչանքը // բառերի համբույրը: // որից սարսուռն է երակներիս օրը// և լցվում ճովոդյուններով հորիզոնների: Միանգամից վերացարկված իմաստասիրության՝ փիլիսոփայության, բնութագրվում է մարդու երական զգացումը հակադրի սեռի նկատմամբ ու առտնին կեցության կենսականը, մարդկայինը, աշխատանքը:

Չեղինակը խտացված տալիս է համաձայնարկային՝ իր գեղագիտական առօրյան: Խոսքային նորոպի կառույցը փոքր հեծքում (խոսքաշար, խոսք, տեքստ) ամբողջացնում է մարդկայինը՝
Ես ներշնչանքն եմ,
և լուսաբացի սահմանը հատող
ասուլայն եմ ոգու...
Ես անմահացողդ այրում ու խորհուրդ,
ես՝ շարժում տառի,
մարդ բառի շավիղ...
և բացվող դուռը այս տիեզերքի... (էջ 82)
Չեղինակը է որոշ աշխատանքային օրերին նվիրված «Շուշի-Ստեփանակերտ» երկուլիին՝ բանաստեղծությունը, որը հեղինակի ճանապարհորդ բնութագրող առտնին հասարակ արտացոլանք է նորոպի գեղագիտական հյուսվածքով:
Ընտրում եմ ռիթմը ընթացքից:
Այսուհետև ազատ է իմ բառը:
Ազատվիր հանգերից անհարկի

և կմոտենաս շարժմանը Ոգու: (83)
Չեղինակը էն ծաղկանունների հեղինակային կերպավորումը, զմահատանքը պատերազմի ժամանակ, որոնք սակավ են, բայց շատ յուրատիպ: Ահա պատերազմի դաշտում, խրամատում գտնվող ռազմիկ զինվոր բանաստեղծի տեսածը, զգացածը, նկարագրածը գարնան շունչ հաղորդող անուշաբույր «Թագուհի մանուշակի» վերաբերյալ:
Խրամատներում
քանվում է երագներիս շունչը
որպես նարինջ:
Դիմազծերիս շարժվող լույսը
չգրված նամակ է:
Ընթերցող է հողը:
Չիշողության լապտերը:
Ուր որ է՝ կնշմարվի հասցեն
աղետի: Տագնապի հորիզոնը:
Եվ հողի խորքից բխող երկինքը
(փառքը չա՛տ, Աստված)
Թագուհի մանուշակն է: (98)

Կամ «խենթության առանցք, ճանապարհի հող» խոհամաստասիրական բանաստեղծությունում հեղինակի կյանքի, ապրումների, զգացածի նկարագրության տևելուն է ընդգծվում գարնան առաջին ծաղկի այլաբերությանը:
Խենթության առանցք, ճանապարհի հող,
հայելու վիհը լցվում է տարբեր
տեսարաններով, -
տե՛նդ է շուրջըլոր:
Եվ ճանապարհս բուրում է ելքի
ծնծախկներով: (14)

Ռ. Եսայանի գեղագիտական խոսքում կշիռ ունեն լուռ, լռություն, լռել նույնարատ բառերը, որոնք ընդհանրապես մտքերի դրսևորման յուրովի բանալիներ են (դա նաև հայ քնարերգության տարածված ու յուրահատուկ արտահայտություններից է): Դրանք ներքին խոսքի, չսավածի խոսուսու դրսևորումներից են, որ կա խոսքի գեղագիտության մեջ (օտար կամ մեր, առլեցուն է կետադրական նշաններով կամ բացթողումներով, բառային լռություն այլաբերվածքն ավելի խոսուն է)՝ իմ լռությունն ուռկան է, // որուն թպրտում է դեռ// երկրիս ապագան (14), Թեև լռության աստիճաններով // բարձրանում է ստվերը Քառուսի (18), ո՞վ է ստվերիս խորքերում լռում (20), մեղքերի լռությունը ոռնում է (23), ամբողջացրու լռությունն ամենայն // Սկզբի (36), Եվ լռության մեջ լավում են հագիվ // Մի քանի շարժում տաք ու կիսարթուն (37), Երագների ճի՛չ է // դուռը լռության (70), Նահատակների լռության միջով // մի բառ էր քայլում // վիրավոր առավոտը (97), ժամանակն անցնում է լռության առանցքով (136) և այլն: Սրա մի յուրատիպ արտացոլանքը բազմակետը՝ եռակետն է: Չեղինակը է կախման կետերի՝ եռակետի (...) տողամիջյան կիրառության արտահայտած դադարի արտահայտության արժեքը: Ռ. Եսայանի չափածոյուն տողամիջյան դադարը կարևորում է հաջորդող բառի իմաստաբանական արժեքը: Օրինակ՝ Չանդիպել կնոջը // նշանակում է շրջանցել ինքը քեզ // և գտնել... Աստուծո՛ւ (26), ուր ծեծվում ու կոփվում է... ճշմարտությունը (38), Ոգուդ լույսը խոսքն անվում... երակների ծափին (55), կապից հետո (խնդիր բառի կարևորությունն է շեշտվում)՝ մնում անհատնիլ // ինչպես... վաղը... (185), շողկապից հետո՝ Ես ինձ եմ հասնո՞ւմ, թե՛... Մասիս սարին (8), կյանքը մույս երա՞զն է, թե՛ ... փոխվել է ինձ պես (58), Եվ ամբողջացնում եմ// բառի ճրագով // և... տիեզերքն՝ (59), Թող ոչ ոքի չնախանձե՛մ, // չնախանձեմ և... հագուստի՛ս (158): Նույնիսկ իրար հաջորդող տողերի տողամիջում են հասարկում՝ դադար գործածվել, ինչպես՝ Իսկ այս մեկը... Աստված ի՛նչ, չեմ սպասել իսկ // Լռությունն է իմ շուրթերով հավում... ինձ (170), և լինել այն, ինչ դո՞ւ ես ուզում (հայրենիք) // լինել... բանաստեղծ // և... ազատամարտի՛կ (183):

Լեզվաբանական գիտաբանների գեղագիտական կիրառություն կա Ռ. Եսայանի խոսքում (բառ, մետրոսայան տառ, տող (18), ստորակետ (33), հայոց գիր (182), խոսք (36), փոխակերպություն (48) և այլն, ուր արբշռ է բառ հասկացության կիրառությունը): Նույնիսկ ստորակետ հասկացության նոր, անսպասելի կառուցվածքային միջավայրը գեղագիտականի զարմանալի նմուշ է կերտում (սի-

րածի կիսադիմային տեսքն արտաքին նմանությամբ՝ վերակից՝ քիչ լայն, ներքևից՝ նեղ, միշտ ցանկալի է և այլ երևույթներ միշտ ստորակետի նման միջարկող՝ այլ բաներից ուշադրությունը շեղող, իր վրա բևեռող):
Լեռան գագաթին ծլում է լույսը,
որպես Ավետի՛ս:
Երբ նայում եմ քեզ
կամ շոյում եմ
վարսերդ,
հուշերիս քաղցը հագնում ե...
Ազատագրված բառի ոգին՝
Անհայտության մաս:
Դեմքդ ստորակետ է:
Աստուծո եղած տողերի միջև
շնչո՛ւմ է բառը:
Ես համբուրում եմ
ստորակե՛տը քո շուրթերի... (33)

Չատուկ անունից կերտված նորակազմ բառեր կան Ռ. Եսայանի կողմից սակավ կիրառված, որտեղ այդ անվան էական հատկանիշն է շեշտվել, օրինակ՝ տիգրանաբազ (6)՝ Տիգրան Մեծ արքայի նման երկրի ինքնուրույնությունը ապահովող, դավթաբազուկ (6)՝ ամենակարող: Սովորական բառերից կերտված նորակազմություններն ավելին են՝ աստեղահամայր (37), աստղակամար (6), արշալուսահան (17), կեղևաթափվող (տանջանք, 20), հայախաղողը (54), հավատաավեր (23), ցատկահարթակ (9) և այլն: Որոշ կենտրոնացված բառերի մեծատառային կիրառություն կա այս գործում, որով ընդգծվում է տվյալ հասկացության մեծարման արժանիքը, ինչպես՝ Եռագույնը, Պատարագ (5), Ջինվոր, Ոգի (6), Անհայտը, Անսահման (7), Մի՛ք (38) և այլն (կան բառեր, կապակցություններ, որոնց մեծատառն արդեն սովորական է, ինչպես՝ Արարիչ (4), Աստված (6), Նոր Գալուստ (8), Նոր Ավետիս (13) և այլն: Ռ. Եսայանի խոսքը պատկերային կառուցվածքի տեսակետից հարուստ է խտացված երկաստիճան և ավելի այլաբերական բառերով, կապակցություններով, նախադասություններով, որոնք երբեմն լարում են պահանջում ընկալելու համար: Գեղագիտական այս տիպի խոսքում մեծ կշիռ ունեն փոխաբերված կառույցները, որտեղ զգալի են շրջաստությունները: Դրանք շրջուն արտահայտություններ են՝ բառեր կամ բառակապակցություններ, որոնցով առարկան, հատկանիշը կամ գործողությունն անուղղակիորեն են անվանվում: Այդ շրջաստությունները յուրատիպ են պայանակվում են, ինչպես՝ հայացքի հաց (11)՝ նայվածք՝ հեղինակային չսաված մտքի, մտորումի, ներքին խոսքի կամ լռության բովանդակություն. Եվ ճանապարհն ուտում է հացը հայացքիս // որպես գոհասեղանից արձակվող մի ճի՛չ (այս երկտողանոց բանաստեղծությունը լրիվ շրջաստություններից է հյուսված), ճանապարհն ուտում է (11)՝ ճանապարհով անցնել, գոհասեղանից արձակվող ճի՛չ (11)՝ անտեղի գոհ, մատաղ, խղճի լապտեր (13)՝ ճշմարտություն, բառերի համբույր (18)՝ ներշնչանք, ծաղիկն արշալույսի (19), մոր հայացք՝ հույս, գորովագութ ուժ, ոգու վանդակ (24)՝ բանաստեղծական ներշնչանք, մտորումներ, ոգու նժար (24)՝ ժամանակ և այլն: Բառեր կան, որ նոր իմաստներ են ստացել, ինչպես՝ կապարիչ-հող (11)՝ Չրեղեն մի ծիլ ճանապարհն ի վար // կապարիչն է հրում, խաղ-1. ստեղծագործելը, 2. ստեղծագործությունը, որի հիմքը միջնադարից առ այսօր հասկացվող երգ, բանաստեղծություն հասկացությունն է՝ բառն է, իմ խաղի ոգին (16) և այլն: Այդպես նույնիսկ նորակազմ բառակապակցություններ կան՝ կայծքարե ձայն, ոտնահետքերի առագաստ, լույսի հերկեր, հորիզոնի ցող, ոգու հողե տանիք, ձայնն ավագների տակ թավալվել, Անսահմանի շնչառություն, հիշողության արգանդ, Արևելքի ոգու խորանի աղբյուր, ցավի անհագ անդունդներ («Իմ հավատը» բանաստեղծությունը, էջ 7, 8) և այլն:

Այսպիսով, Ռ. Եսայանն արցախյան գեղագիտական խոսքի մեծ ներուժ է բավակալից հզոր է նրա բանաստեղծական խոսքը: Այն հարուստ է գեղագիտական խոսքի նորարարական տարբերությամբ հատկանիշներով:

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
Բ.գ.թ., դոցենտ

ՆԱԽԱՍՏԱՆՈՐՅԱ

ՆԱՍԱԿ ԶՍԵՌ ՊԱՊԻՆ

Զմեռ պապ, իմ սիրելի զմեռ պապ: Զիմա փոստարկղներ քիչ կան, դրա համար այս նա- մակը ուղարկում եմ ֆեյսբուքով և հույս ունեմ, որ ավելի շուտ տեղ կհասնի:

Իմ մանկության բարի կախարհ, զավակներիս ման- կության բարի կախարհ, թոռներիս մանկության բարի կախարհ, ինձ ասա քո երկարակեցության գաղտնիքը, ավելի ճիշտ՝ անմահության գաղտնիքը: Զիմա երկի կարողում ես նամակս ու ասում՝ ո՞վ է այս միամիտը, գաղտնիքն ասեն որ ի՞նչ, բոլորին անմահացնեն, ան- մահների ձեռքը կրակն ընկնեն, հա՞: Զետո ինձ ո՞վ կհա- վատա, հարի՞՞ք եմ, ինչ է:

Դե, եթե չես ուզում ասել, զմեռ պապ, կամքը քոնն է, բայց գոնե այս խնդրանքս կատարիր: Լսիր, ամեն տարի մի քանի մանր-մունր նվերներ բերելով՝ խաբում ես երե- խաներին, մենք էլ համուն երեխաների՝ հաճույքով խաբ- վում ենք: Արի այս տարի մի պայման կապենք: Զարյու- րավոր տարիներ մարդիկ գովերգել են քեզ, երգեր գրել, ոտանավորներ գրել քո մասին, իսկ դու ի՞նչ ես արել նրանց համար, բաժանած նվերներդ էլ գիտես որտեղից են եկել: Նման դեպքերում մարդիկ իրար շնորհակալու- թյուն են հայտնում, իսկ դու երեխաների հետ պարում ես, մի-մի հատ էլ մանդարին տալիս ու չվում: Բա մարդկու- թյունը որտե՞ղ մնաց, մի հատ հարցրու՝ այ՝ ժողովուրդ ինչպե՞ս եք, ի՞նչ դարդ ունեք, ի՞նչ ցավ ունեք, ձեզ նե- ղացնող հո՞ չկա, ինչո՞վ կարող եմ օգնել: Ինչպես Կարպն էր ասում՝ մենք էլ մարդ ենք, չէ՞:

Զո՞ չես վիրավորվում ասածներիցս: Պիտի ասեն, էլի: Օրինակ՝ ազգս ալեկոծ ծովի է նման, ալիքների կա- տարներին լիքը նավակներ՝ մարդկանցով լցված: Ալիք- ները նրանց քշում են այս ու այն կողմ, խեղճերը չզիտեն դեկը որ կողմն ուղղեն, ծովը երբ կհանդարտվի, որ ասի դուրս գան, իրենց քողտկները շինեն ու խաղաղ կյանք վայելեն: Բոլորս սպասում ենք մի կախարհական փայ- տիկի: Դու չունես այդ փայտիկից, զմեռ պապ, սիրելիս, այս անգամ այդ փայտիկով արի: Խաղաղեցրու ազգիս, մի պարկ լիքը սեր բեր, մի պարկ լիքը խաղաղություն բեր, մի պարկ համերաշխություն բեր, մեզ համար մի պարկ համբերություն բեր, վերևում նստածների համար մի պարկ գթասրտություն ու խիղճ բեր և բոլորիս համար անսահման քանակությամբ ժպիտ, ուրախություն, ծի- ծաղ, առատություն բեր: Ի՞նչ ես քնծիծաղ տալիս բեղիղ տակ, ուժո՞ չի՞ պատում, թե՞ բեռի ծանրությունից ես վա- խենում: Մեր առյուծ տղաները չեն թողնի քեզ մենակ, իլա քեզ էլ շալակած կբերեն: Միայն թե դու իմ խնդրան- քը կատարի:

Է՛հ, զմեռ պապ, զմեռ պապ, գիտեիր միայն երեխա- նե՞րն են նամակ գրում:

Մարդ որ մեծանում է, երեխա է, չէ՞ դառնում: Սա էլ մի նամակ է՝ փոքրացած մեծերի անունից:

Աննա ԱՅՎԱԶՅԱՆ

ՇՐԱՋՔ ԳՈՒՅՆԵՐ



Տարեմուտի հրաշքներին բոլորն են հավատում ու սպասում, հատկապես երեխաները: Այս տարվա ամանորյա հրաշքներին Արցախի երեխաների մասնակցությունը սկսվեց «Չրաջք գույ- ներ»-ով, որը հատուկ նրանց համար բերել էր ԶՅ ժողովրդական արտիստ Արթուր Գրիգորյանն իր երգի պետական թատրոնով՝ նրա նոր սերնդով, դերասաններով: Դեկտեմբերի 20-24-ը Ստե- փանակերտի մշակույթի և երիտասարդության պալատը վերած- վել էր հեքիաթային դրամայի, որտեղ հավաքվել էին երեխաների սիրելի հեքիաթների և մուլտֆիլմերի հերոսները և Դիսնեյ ու Ար- թուր պայպիկների «համագործակցությամբ» ստեղծել էին հեքի- աթային հրաշալի աշխարհ: Այդտեղ էին մինյոներն ու արքայա- դուստր Աննան, ջքնաղ Փեռին ու Էլզան, ծիածանի յոթ գույները, նրանց համապատասխան յոթ նոտաները: Ընդ որ բնության մեջ ամեն ինչ ներդաշնակ է: Ամեն գույն իր բնավորությունն ու երաժշտական հնչյունն ունի: Եվ ինչպես բոլոր հեքիաթներում, այստեղ էլ չար ուժեր կային, որոնք փորձում էին ապակողմն-

րոշել երեխաներին վատ արարքներով: Երեխաները հասկացան, որ այնպիսին, ինչպիսին Վարդագույնն է՝ Վարդան դարձած Վար- դուհին, չպետք է լինել. այդպես երգել, այդպես ապրել, արիա- մարիել բոլորին, լինել կռվարար և անարժան լինելով հանդերձ՝ ձգտել նվաճումների հովանավոր մայրիկ-Թիրվելայի օգնու- թյամբ: Անկայուն Դեղինը տեղի տվեց Վարդագույնի քնայքների և կորավ: Բայց հանդիսատես երեխաների ցանկությամբ նա հայտնվեց, և ինչպես նա, այնպես էլ Վարդագույնն ու նրա օգ- նական ուժերը վերափոխվեցին՝ դառնալով լավը: Ներկայաց- ման ողջ ընթացքում հերոսները երկխոսության մեջ էին երեխա- ների հետ: Նրանց հետ պարեցին, երգեցին: Երգերն ինչպես հա- մաշխարհային մուլտֆիլմերից էին, այնպես էլ հայերեն էին, որոնց հեղինակը բեմադրիչն է՝ Արթուր Գրիգորյանը: Զնչեցին Նոր տարվա մասին, Ստեփանակերտին նվիրված հին ու նոր եր- գեր: Երեխաների ուրախությունն ու ցնծությունը կրկնապատկ- վեցին, երբ հանդիսականների կանչով հայտնվեց զմեռ պապը:

Զինգ օր շարունակ երեքական սեանսով Արցախի Զանրապե- տության բոլոր շրջաններից ավելի քան 6000 երեխա դարձավ այդ հրաշքների մասնակիցը: Նրանց հետ՝ ծնողները, ուսուցիչ- ները, մանկապարտեզի դաստիարակները:

Մտահոգացման մասին մեզ հետ զրույցում Արթուր Գրիգոր- յանն ասաց. «Նոր տարում բոլորն ակնկալում են հրաշքներ, բա- րի գործեր: Արդեն երկրորդ տարին է, որ Արցախի երեխաների համար բարի մարդկանց շնորհիվ նախաձեռնում ենք ամանորյա այսպիսի հանդես: Սա նոր ներկայացում է: Ցանկացած երեխա սպասում է հրաշքի՝ դա լինի մայրիկի, հայրիկի, թե Արթուր պա- պիկի կողմից: Բարի գործը պետք է արվի, ու դրա մասին քիչ խոսվի, եթե ուզում ես, որ քո Նոր տարին լավ անցնի: Պետք է բա- րին անել մարդկանց համար, ուրախություն պատճառել: Դրա մեջ հերոսություն չկա: Սա ապրելաձև պետք է լինի»:

Ս. ՎԱԲՐԻԵԼՅԱՆ



Ժ Պ Ի Տ Ն Ե Ր

Գրականության դասի ընթացքում «Առակ» թեման ուսուցանելիս հումորով փայլող սրա- միտ աշակերտին՝ Բորիկին, անվանեցի դա- սարանի Պըլը-Պուղի... Վիրավորանք արտա- հայտող հայացքով Բորիկը անցավ «հակա-գ- րոհի».

- Մի կարգին մարդ չգտա՞ր ինձ նրա հետ համեմատելու...

Մի քանի օր անց գրական խմբակի ժամա- նակ նույն դասարանի սաների համար կար- դացի Սերո Խանգադյանի «Պըլը-Պուղու գվարձախոսությունները» գրքից մի քանի առակ... Ներկա էր նաև նույն Բորիկը: Ունկնդ- րելուց հետո ժպտահայաց դիմեց ինձ.

- Ընկեր Զայրապետյան, ես չգիտեի, որ մեր դարաբաղի Պըլը-Պուղին այդքան խե- լրք մարդ է եղել...

Մենք՝ ուսուցիչ-աշակերտ, հաշտվեցինք- խաղաղվեցինք...

Գյուղամիջում, բաց երկնքի տակ նարդի էինք խաղում համազուրկացի մի խումբ տղա- ների հետ: Շոգ ամառ էր, միջօրե: Խիստ ծա- րավ էի զգում: Տեսնելով տուն գնացող կրտ- սեր դասարանի աշակերտուհի Լեռնուհուն՝ խնդրեցի նրան.

- Բալիկ ջան, ձեր տնից մի բաժակ ջուր չե՞ս բերի:

- Դու մեզ դաս չես տալիս,- խստադեմ մեր- ժեց նա ինձ:

Զաջորդ ուսումնական տարում չորրորդ դասարանում արդեն մայրենի էի դասավան- դում Լեռնուհուն:

Դարձյալ երբ աշխատանքից հետո մեր օրվա կուլտուրական ժամանցն էինք կազմա- կերպել գյուղամիջում, ես, ծարավ զգալով, դիմեցի Լեռնուհուն.

- Ինձ մի բաժակ ջուր չես բերի՞...

- Ընկեր Զայրապետյան, ինչո՞ւ ջուր, ես ձեզ համար պատրաստ եմ սառը թան էլ բե- րել,- հոժարակամ, ժպտադեմ պատասխանեց արդեն ինձ աշակերտուհի դարձած Լեռնու- հին:

Քերականության դասի ժամանակ աշա- կերտների տրամաբանական մտածողությու- նը զարգացնելու նպատակով տարաբնույթ հարցեր էի առաջադրել յոթերորդ դասարան- ցիներին:

Զերթական հարցն էր. «Գրել մեկ բառով՝ «աշխատանք սիրող մարդ»:

Մտավոր առունով միջակ կարողություն- ների տեր Իրան գրեց՝ էշ:

6-րդ դասարանի աշակերտուհիս՝ Շուշա- նը, գարնանամուտին ձնծաղիկների մի փունջ դրեց սեղանիս:

Ծնվեց փոքրիկ երկու քառատող չափածո ստեղծագործությունս, որը մի քանի օր անց տպագրվեց թերթում: Երբ նույն դասարանի սաներս կարդացին տպագիր բանաստեղծու- թյունս, հաջորդ օրվա դասի ժամանակ գրա- սեղանիս տասնյակ ծաղկեփնջեր դրվեցին դասարանի մյուս բոլոր սաներիս կողմից: Նրանք ակնկալիք-սպասումների մեջ էին, որ իրենց նվիրած ծաղիկները դարձյալ նոր ստեղծագործության նյութ կդառնան:

Ինչպիսի՞ մանկական պարզամտություն... իհարկե, ես հուսախաբություն...

Դպրոցամերձ փողոցի եզրի ծառից քեռի Վոլոդյան կապել էր իր էշը, որի շուրջը վազվ- գում էր փոքրիկ քուռակը:

- Քեռի՞, այդ քուռակը քոնն է՞,- հարցնում է յոթերորդի Սաքոն:

- Չէ, բալիկ ջան, մեր էշինն է,- պատաս- խանում է քեռի Վոլոդյան:

Առաջին դասարանի Զայկը, տեսնելով, որ իրենց դասերին հաճախակի ներկայացող փոխտնօրեն Զարությունը մինչեւ դասի ավարտը դուրս եկավ դասարանից՝ առանց դիմելու ուսուցչուհուն, բարձրաձայն հարց- րեց.

- Ընկեր Պողոսյան, երբ ընկ. Զարությունը դասը դեռ չավարտած, դուրս է գալիս, ինչո՞ւ չի դիմում Ձեզ՝ «դուրս կարելի՞ է» հարցով:

Նախադպրոցական տարիք ունեցող Անուշիկին, որ լավ, քաղցրիկ ծայրով երգում էր, դպրոցի ուսուցչանոց են հրավիրում մի խումբ ուսուցիչներ, պահանջում Սայաթ-Նո- վա երգել: Իրոք, ամուշ ծայրով երգում էր փոքրիկ Անուշիկը: Բայց երբ նախապատ- րաստվում էր ուսուցչանոցից դուրս գալ, դի- մեց ուսուցչանոցում ներկա գտնվողներին.

- Բա դուք չեք ուզո՞ւմ ինձ մի բան տալ, վարձատրել...

Զիմա ո՞վ է առանց փողի երգում...

Թովիկ ԶԱՅՐԱՊԵՏՅԱՆ Թոշակառու ուսուցիչ ք. Ճարդար

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ
Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ
Հիմնադիր
«Լուսարար»
ՓԲԸ
Ստեփանակերտ,
Յ. Թումանյան փ. 95, 94-38-99,
E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույ-
գությունն ապահովում են հեղինակները: Թերթը
ընթերցողների հետ զրազրություն վարելու պար-
տավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլոյն»
ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝
տպագրական 3 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 28.12.2018թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: